

И пергуаруале

И Кларк Унонле

491.99-8
7-98

1929

ՔՐՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՍՍՎՈՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

31.99-8

- 98

Handwritten signature

ԴԵՊՈՒ ԿՈՄՄՈՒՆԱ

ԱՅԲԲԵՆԱՐԱՆ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Կ Ա Ջ Մ Ե Ց Ի Ն


ԳՅՄԱՐՅԱՆ, ԴՈՒՐԳԱՐՅԱՆ,
ԽՈՒԴՈՅԱՆ, ՇԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

~~3238~~
433

ՊԵՏԱԿԱՆ ՇՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ—1929

Տպագրվում է
ՀՍԽՀ ՊԵՏՎԻՍՅԱՆԻ
բուլժավոյքամբ:



վանի վարի

վարի վանի


БИБЛИОТЕКА
Академии Наук
УРСР

49097 KH

ՊԵՏՏՐԱՏԻ ՅԵՐԿՐՈՐԴ ՏՊԱՐԱՆ ՅԵՐԵՎԱՆՈՒՄ
Հր. № 1033 Գառվ. № 794
Գրառ. № 2196(բ) — Տիրած 60,000

/ 19164.59 /


3721-91



վանի վարի

վանի վաղ վարի

վաղ վարի վանի



Վաղո վար արա:

վաղ վար արա:

1 որավար վարի:

Վանո արի վար արա:

Իվան 2 որավար վարի:

Որի վաղ վարի:

Ի Ի Ո ռ



Ունան արի ու վար արա:

Վանին 3 որավար ունի:


Նա 2 որավար վար արավ:

Արան ու Նինան արոր ունին:

4 որավար վար արին:

Վաղ վար արին:

Նն Ուու



Գարի ու Յորեն

Վանին ցորեն ունի:

Վանին գարի ունի:

Վանին ցորեն ու գարի ունի:

Վանի, վաղ վար արա:


Յորեն ու գարի ցանի:

Վաղ վարի, վաղ ցանի:

Գարո, ցորեն ցանի:

Արա, գարի ցանի:

Աա Րբ



Վարի ու ցանի

Վազոն ցորեն ունի:

Գարոն 3 որավար ունի:

Վազո վարի, Գարո ցանի:

Վազոն 3 որավար վարեց:

Գարոն 3 որավար ցանեց:

Արա, Ունանի գարին ցանի:

Վազ վարեցին, վազ ցանեցին:

8 ց

Արա

1 2 3 4 5

8

Հատվող ալբերն № 1

Ի	Ի	Ի	Ի	Ո	ո	ո
Ղ	ղ	ղ	Լ	ա	ա	ա
ա	Ն	ն	ն	Ու	ու	ու
ու	Բ	բ	բ	Բ	Գ	գ
գ	Ց	ց	ց	Վ	վ	վ
Շ	շ	շ	Ե	ե	ե	ե
1	1	2	2	3	3	4
4	5	5	6	6	7	7
8	8	9	9	0	0	0

9



Նուկե, շո՛ւտ արի

Արի Արա, շո՛ւտ արի:

Շո՛ւտ արի ու վա՛ր արա:

Արի Ունան, շո՛ւտ արի:

Ցանի ցորեն ու գարի:


Արան շուտ վար արավ:

Ցորեն ու գարի ցանեց:

վվ

Արա արի

6 7 8 9 10



Շաղացան ու շարացան

Նունեն գարի ունի:

Գեվոն ու Գինոն ցորեն ունին:

Նունեն գարին շաղացան արավ:

Ուշ շաղացան արավ:

Գեվոն ու Գինոն շարացան արին:


Վաղ շարացան արին:

Նունե, շարացան արա:

Շարացան արա, վաղ ցանի:

Գ Դ

Արան վար արա!



Նանին մանուկ է

Նանին մանուկ է:

Նա ուշ է մանուկ:

Նանի', շուտ մանի:

Շուտ մանի, շատ մանի:

Մանան, շուտ-շուտ մանի:

Նունե, արի տա'ր:

Մարոն մանեց, Գարոն տարավ:

Ե Ե

Զուռնի գարի ունի



Շողոն կար ե անոււմ

Շողոն կար ե անոււմ:

Նա շոր ե կարում:

Շատ ուշ ե կարում:

Շողոն, շոր շնւտ կարի:

Շոր կարի, Մանուշին տուր:

Մարոն, Ունանին նոր շոր կարի:

Շ 2

Վարուն կար ի անոււմ



Կարի մեքենա

Շուշոն մի մեքենա ունի:

Նա շատ շուտ ե կարում:

Շողոն ուշ ե կարում:


Շուշոն կարում ե 1 որում:

Շողոն կարում ե 4 որում:

Մեքենան արագ ե կարում:

Մ մ

Շուշոն կար ի անոււմ



Կ ո մ ո լ ն ա

Կոմունան շարացան է անում:

Կոմունան վաղ է ցանում:

Կարոն ու Մարոն շաղացան են անում:

Կարոն մենակ ուշ է ցանում:


Արա՛մ, շարացան արա:

Վաղինա՛կ, արի կոմունա:

Վաղոն վարեց, շարացան արեց:

Ղ ղ Կ Կ

Կարոն ցանում է



Տ ր ա կ տ ո թ

Կոմունան տրակտոր ունի:

Ավոն 2 գոմեշ և արոր ունի:

Ավոն գոմեշով է վարում:

Նա մենակ շատ ուշ է վարում:

Կոմունան վարում է տրակտորով:


Տրակտորով շատ շուտ է վարում:

Ավոն, արի կոմունա, շուտ վարի:

Տ տ

Կոմունան տրակտոր ունի

374-91




Կալսող մեքենա

Մեր կոմունան տրակտոր, շարացան մեքենա ու կալսող մեքենա ունի: Ես տարի մեր կոմունան վաղ վարեց, շուտ ցանեց ու արագ կալսեց: Կալսող մեքենան շատ արագ և շատ լավ է կալսում:

Սարն, արորով մի վարի, շաղացան մի արա, կամով մի կալսի. արի կոմունա, մեքենաներով վարի, ցանի ու կալսի:

Ս

Ասար, արի կոմունա



Կարի արտել

Մարոն, Աղասին ու Նինան արտելում են կար անում. նրանք արտելի մեքենաներով են կարում: Աղասին մի վերարկուն արտելում կարում է մի որում: Լենան մենակ է կար անում. նա մի վերարկուն կարում է 4 որում:

Լենա՛, մենակ մի՛ կարի. արի արտել, շուտ կարի, լավ կարի:

Լ

Արարիում շուր քն կարում



Ս ի ը ե լ ի Մ ա ղ ա ք

Ես տարի ուսումնարան եմ գնում: Լավ գրել
եմ սովորել: Ուսումնարան են գալիս Նունեն, Լե-
նան, Մոսին, Աղասին: Շնորհակալ եմ գրել:

Քո՛ Սիրաք

Ք ք

Ինչպես խոսում եմ քեզ

Մ	մ	մ	Կ	Կ	Կ	Տ
տ	տ	Ս	ս	ս	Լ	Լ
Լ	Ք	ք	ք	Բ	բ	բ
Դ	դ	դ	Ը	ը	ը	ը
Պ	պ	պ	Ծ	ծ	ծ	Հ
Տ	Տ	Խ	խ	խ	Չ	Ն
Ն	Ջ	զ	զ	Ժ	ծ	ծ
Թ	թ	թ	Յ	յ	յ	Ջ
Ջ	Ծ	ճ	Թ	ռ	ռ	Փ
Փ	Ջ	Ճ	Ծ	Փ	Փ	Լ



Գեղացի ու բանվոր

Բամբակ ունես, տո՛ւր բանվորին,

վոր սիրուն շոր ու մեքենա տա:

Ցորեն ունես, տո՛ւր բանվորին,

վոր շարացան մեքենա տա:

Բամբակ շա՛տ ցանի, շարացան՝ արա:

Գեղացի, բանվորին բամբակ տուր:

Բանվոր, գեղացուն մեքենա՛ տուր:

Բ Բ

Գիշացի, բամբակըմբիմ բամբակ ցու
Բամբոր, գիշացուն միջևս ցու



Սովորի, սովորի, սովորի:
ԼԵՆԻՆ.

Ընկեր Լենինը ասում է՝ սովորի, սովորի, սովորի:

Ընկեր, լսի Լենինին:

Ամեն ոք գիրք ու լրագիր կարդա, շատ սովորես, շատ բան կիմանաս:

ԸԸ

Ընկեր Լենինը ասում է՝
սովորի, սովորի, սովորի.




Կ ո պ եր ա տ ի վ

Պետրոսը ու Կարապետը արտելի պանիրը տարան շուկա: Մասնավորը մի կիլո պանիրն տալիս էր 80 կոպեկ: Նրանք գնացին կոպերատիվ: Կոպերատիվը մի կիլո պանիրն տվեց 90 կոպեկ: Պետրոսը ու Կարապետը կոպերատիվից գնեցին շաքար, սապոն, դանակ, կացին ու գերանդի:

Պ պ

Մասնավորի մոտ սապոնի կիլոն 75 կոպեկ է, իսկ կոպերատիվում 60 կոպեկ:



Տեքստիլ գործարան

Լենինականի տեքստիլ գործարանը շատ նոր մեքենաներ ունի: Գործարանում շատ բանվորներ ու վարպետներ են բանում: Բանվորները բամբակից գործում են կտավ ու գուլպա: Գործարանը կապ ունի կոպերատիվների հետ: Գործած կտավը տալիս են կոպերատիվին: Գործարանին կից դպրոց կա, վորը պատրաստում է վարպետներ: Գործարանը ունի մսուր:

Ծ ծ

Լ ինքնուսույն լինելու փոխարեն գործարանը շատ նոր մեքենաներ ունի:




Հովիվը սարում գիրք է կարդում

Գարուն էր: Բատրակ Հակոբը անգործ էր: Նա գնաց բատրակիում ու պատմեց իր ցավը: Հակոբի հարցը դրեցին բատրակիումի նիստին: Նրան հրավրեցին հովիվ: Հակոբը սարում հոտին է հետևում ու կարդում: Նա իր դասերը միշտ սովորում է ու ամեն իրիկուն գնում է դպրոց:

Հ Կ

Ինքնուսույն լինելու փոխարեն գործարանը շատ նոր մեքենաներ ունի:



Կոլեկտիվի խոտհար մեքենան

Խորենը մենակ եր աշխատում: Նրա խոտը հասել եր: Ուշ եր, պետք եր խոտը հարել:

— Խորեն, գերանդին շատ ուշ ե հարում: Հինգ հեկտար խոտը հարում ե հինգ որում: Արի մեր կոլեկտիվը. կոլեկտիվի խոտհար մեքենան հինգ հեկտար խոտը հարում ե մի որում:

— Ուղիղ ե, խոտհար մեքենան շուտ ե հարում, լավ ե աշխատում: Կոլեկտիվում հեշտ ե աշխատել: Խորենը մտավ կոլեկտիվ:

Խ խ

Նույնպիսի խոտհար մեքենա ունի խոտհար մեքենան շուտ է հարում:

Արտելի վոչխարները

Ես տարի արտելի խոտը շատ եր: Վորոշեցին վոչխար ունենալ:

Վոչխարը շատ ոգուտ կտա: Հիմա բուրդը լավ գին ունի:

Ընկեր Խաչիկին Բորչալու ուղարկեցին վոչխար գնելու:

Տասչորս որից հետո Խաչիկը քսանչորս վոչխար բերեց:

Ո՞վ ե պահելու վոչխարները: Նրանց լավ պետք ե խնամել:

Իհարկե բատրակ Գեղամը. վոչխար պահելը հեշտ բան չի. նրանք շուտ են հիվանդանում:

Բատրակ Գեղամը լավ կպահի. նա վոչխար շատ ե պահել:

Գեղամին հովիվ կանչեցին ու արտելի անդամ գրեցին:

Չ չ

Մի արտիկը քսանչորս լավ վոչխար գնեց. Զովիվ կանչեցին քսանչորս Գեղամին: Գեղամը լավ վոչխարների է պահում:



Խ ո գ ա ր ու ծ ա ր ա ն

Մի որ մենք գնացինք պետական խոզաբուծա-
րան:

Ի՞նչ տեսանք. խոշոր, մաքուր խոզեր:

— Խոզը մաքրասեր է, — ասաց խոզաբուծարանի
վարիչ Չավենը: — Ի՞նչ անի նա, վոր չի կարողա-
նում վիզը ծռել, վորպեսզի գնչով մարմինը քորի,
մաքրի: Իրանից է, վոր նա քսվում է պատերին:
Իուք սիրում եք լողանալ, իսկ նա ցեխն է մտնում:
Պետք է խոզ պահել, լավ ու մաքուր պահել, շուտ-
շուտ լողացնել:

Վորոշեցինք հարց գնել մեր արտելում, վոր խոզ
գնի:

Զ գ

Զավիճար լավ խոյիք ի պատում:
Նրանց լավ կիրակրում ի ու
Տախար պատում:



Ժ ո դ ո վ

Իպրոցում կանանց ժողով էր:

— Ի՞նչ ժամանակի հասանք, — գլուխը շարժելով ասում
էր Ռհանը, — կինն ի՞նչ, ժողովն ի՞նչ:

— Ռհանն ապեր, աշխարհը լուսավորվել է, — ասաց կոմ-
սոմոլիստ Ժորժիկը, — ի՞նչ գիտես, վոր քո կինն էլ ժողով
չի գնացել:

— Իմ կինը խելոք է. նա ժողով չի գնա, — ասաց Ռհանը
ու գնաց դեպի տուն:

Կինը տանը չեր: Միքիչ հետո ներս մտավ նրա կին
Մարանը:

— Մարգ, ժողով գնացի. լավ-լավ բաներ ասացին:

— Ա՛ կնիկ, ի՞նչ քո բանն է ժողովը. ի՞նչ կարող ես
հասկանալ:

— Շատ բան հասկացա. հիմա իմացա, վոր մարդ ու
կին հավասար են, վոր կինը պետք է զրազեա լինի:

Միքանի որից հետո Մարանը գնում էր սովորելու:

Ժ ժ

Կինը երեսնա սպասք ի. նա կա-
րող ի գնալ ժողով, ընտրիչ
ու ընտրվիչ:



Գ Ի Բ Ե Լ Ի Ն Ս Ո Ղ Ո Ն

Գարբին Սողոն շատ բան է անում. նա շինում է դանակ, կացին, ուրագ, դուր ու շատ ուրիշ բաներ: Սողոն մենակ է բանում. նա շատ է բանում: Գարոն ու Վաղոն միասին լավ են բանում:

Դ Դ

Դարբին Ասփոն միակ է բանում
 Նա շինում է ուրագ, դանակ ու դուր

Մ Ե ր Կ Ո Մ Ո Լ Ն Ա Ն

Գարոն եր. Մոտենում եր ցանքի լավ ժամանակը:
 — Վարելու ժամանակը մոտենում է. վոչ գութան ունենք,
 վոչ արոր: Ինչպես ցանք անենք: — Հարցը եղպես դրեց չքավորա-
 կան ժողովում կոմունիստ Հարութը:

— Հարկավոր է միանալ, — ասավ Հարութը, — միացած ուժով
 վոչ թե գութան, տրակտոր կարելի կլինի բերել: Ինչո՞ւ սամա-
 դարցիք կարող են միանալ ու կոմունա կազմել, տրակտոր բերել
 տալ, իսկ մենք վոչ:

— Մենք ել ենք ցանկանում կոմունա կազմել, — լսվեց ամեն
 կողմից:


Ժողովում վորոշեցին կոմունա կազմել:

Չորս որից հետո Հարութը քաղաքից բերեց հաստատված վո-
 ղոշումը:

— Շուտով մեզ տրակտոր ու խոտհար մեքենա կուղարկեն, —
 ուրախ-ուրախ ասաց նա:

Թ Թ

Մի ուսում իս բիրտ ումբուս
 Իողդ բող վարի միման
 Կույակմիրից ապար մաս
 Գրա գրվի կրմունս:



Ա. յ գ ե կ ու թ

— Ա. յ տղա, Պարույր, վաղն այգին քաղում ենք, — ա-
սաց Վրույրն իր վորդուն: — Գնա՛, այգեգործական արտելին
իմաց տուր, վոր խաղողն ընդունեն:

Պարույրն իսկույն վագեց իմաց տալու:


Լույսը չեր բացվել, վոր Վրույրը դարթեցրեց բոլորին:

Պարույրը, իր մայրն ու բույրը շուտով վեր կացան,
հատեցին սայլը և գնացին այգի:

Մինչեւ արեւի մայր մտնելը խաղող քաղեցին: Մուլթն
եր, վոր պրծան, բաղած խաղողը բթոցներով դրին սայլին
ու բշեցին դեպի այգեգործական պահեստը:

այ, ույ

Աչգիտ լավ մշակիր վոր լավ բիրի քու
Թի արարի աւուրսա՛ն չի աւուրսա՛ն գրսի



Ա. շ ու ն

Շոգերն անցան, պտուղները քաղեցին,

հացով մրգով ամբարները լցրեցին:

Նոյեմբեր ե, բարակ անձրեւ է մաղում,


մերկ դաշտերը յեւ ծառերը վողողում:

Ե՛յ-Ե՛յ-Ե՛յ աշուն ե.

Տեսե՛ք, ինչպե՛ս նախշուն ե...

ոյ, եյ

Աչգիտ լավ պատիլ իս
Տիրամի ի լավ պատիլ
խաղողի կախումն արա
չորացրու թթու դիր
Ինչ վոր ամիչորդ է ծախիլ:



Գյուղի ու քաղաքի կապը

Բանվորն ապրում է քաղաքում և աշխատում է գործարանում: Այնտեղ նա արտադրում է զանազան գործիքներ, մեքենաներ և ապրանք՝ շաքար, թեյ, սապոն և այլն:

Գյուղացին ապրում է գյուղում և պարապում է գյուղատնտեսությամբ: Նա արտադրում է զանազան մթերքներ՝ ցորեն, ալյուր, գարի և ուրիշ շատ բաներ:

Գյուղացին իր արտադրած մթերքները տալիս է քաղաքին և դրա տեղ ստանում կտորեղեն, շաքար, աղ, լուցկի, սապոն, զանազան գործիքներ, գիրք, լրագիր և ուրիշ ապրանքներ:

Քաղաքի և գյուղի կապը պիտի պահպանի կուպերատիվը:

յա, յու

Մի մարդ կտոր բերեց ներկարարի մոտ, վոր ներկի:

— Ի՞նչ գույնի ներկեմ,—հարցրեց ներկարարը:

— Մի այնպիսի գույն, վոր վո՛ն կարմիր լինի, վո՛ն կապույտ, վո՛ն կանաչ, վո՛ն դեղին, վո՛ն սեւ...



— Լավ, հասկացա, կներկեմ,—ասաց ներկարարը:

— Յերբ գամ տանեմ,—հարցրեց մարդը:

— Մի այնպիսի որ արի, վոր վո՛ն յերկուշաբթի լինի, վո՛ն յերեքշաբթի, վո՛ն չորեքշաբթի, վո՛ն հինգշաբթի, վո՛ն ուրբաթ, վո՛ն շաբաթ, վո՛ն կիրակի, մի խոսքով շաբաթվա յոթ որից վո՛ն մեկը...

յե, յո

1	2	3	4	5	6	7	8	9	10
մեկ	յերկու	չերեք	չորս	հինգ	վեց	յոթ	ութ	ինն	տաս




Բ ա ն Ղ ա ր ա ն ո ց

Բանջարանոցից մենք ստանում ենք կաղամբ, տակ, բողկ, լոբի յեվ ուրիշ բանջարներ: Բանջարները շատ սնունդ ունեն: Կաղամբն ամենալավ բանջարներից մեկն է: Նրա մեջ կա ծծումբ, վորը մեր մարմնին հարկավոր է:

Տակն ոգտակար բանջար է: Նրա մեջ շատ շաքար կա: Այգպես ել ոգտակար են մյուս բանջարները: Բանջարները ոգտակար են յեվ համեղացնում են կերակուրը:

22

Ինձեզարանուցի հողը պարար-
պարարու և նոր ցամփր.



Խրճիթ-ընթերցարանում

Ուշ աշուն եր: Յերեկոները գուրի յերիտասարդները հավաք-
վում եյին խրճիթ-ընթերցարանը:

— Ընկերներ, մեզանում Պաշը-Ավիաքիմի բջիջ կա,— ասաց
կոմսոմոլի բջիջի բարտուղարը:— ՊԱՁԸ-Ավիաքիմը յերկրի պաշտպա-
նության գործին է հետեւում: Պետք է անդամ գրվել:


— Ուզում ենք գրվել,— ամեն կողմից ասացին յերիտասարդ-
ները:

— Ընկերներ, բացի ՊԱՁԸ-Ավիաքիմը, մեր խրճիթն ունի այլ
անկյուններ. ինչո՞ւ չեք մասնակցում այդ անկյունների աշխա-
տանքներին,— ասաց խրճիթվար Տաճատը:— Մեզանում կա նաև
անաստվածների խմբակ:

Յերիտասարդները բոլորը վորոշեցին մասնակցել խրճիթի աշ-
խատանքներին և գրվեցին խմբակներում:

ՃՃ

Երեւոյի քաղաքի Արարիկի խմբակի
պատանիները յարմարեցան:



Ռ ա գ ի ո

Համամլի խրճիթ-ընթերցարանում ռազիո գրեցին:

Ժամը 12-ին խրճիթ-ընթերցարանը լիքն էր մարդկանցով:

— Դատարկ բան է,—ասում էր Ռուբենը,—սով է տեսել, վոր առանց թելի հեռագիր լինի:


Բոլորն ապշեցին, յերբ հանկարծ պարզ լավեց Յերեվանից խոսող բժշկի ճառը քութեշի մասին:

Պառավ Զավոն գլուխը մոտեցրել էր ռազիո-ապարատին, կարծես թե ուզում էր խոսողին տեսնել: Յերեք ժամ ռազիոն խոսում ու յերգում էր:

— Այ քեզ սովետական իշխանություն, — գլուխները շարժում էին ծերերը:

Ռ ո

Տարվա ամիսներ՝ հունվար, փետրվար, մարտ, ապրիլ, մայիս, հունիս, հուլիս, ոգոստոս, սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր, դեկտեմբեր:



Փ ո ս տ

Փանոսի յեղբայրը ծառայում էր Կարմիր բանակում: Նա նամակ պետք է գրեր յեղբորը, բայց գրել-կարդալ չգիտեր:

Մի շաբաթից հետո միայն մի աշակերտ գրեց Փանոսի նամակը: Փանոսը նամակը փակեց ծրարում ու Փարբուց Աշտարակ գնաց:

Փոստում նամականիշ գնեց, փակցրեց ծրարին ու մեկնեց վարիչին:

— Ընկեր, գցիր փոստ-արկղը,—ասաց վարիչը. բայց նկատելով, վոր հասցեն չէր գրված, ասաց.

— Հասցեն գրիր:

— Գրել չգիտեմ,—ասավ Փանոսը:

— Ասա յես գրեմ:

— Յերեվան...

— Հետո:

— Կարմիր բանակում է ծառայում,—ասաց Փանոսը:

— Վճր գնդում, վճր վաշտում:

— Չեմ հիշում, նրա նամակը հետս չի:

— Ա՛ռ, գնա գլուղ, հասցեն գրել տուր, նոր ուղարկի:

Փանոսը շատ էր բարկացած. ճամպին մտածելով գնում էր Վորոշեց, ինչպես լինի, գրագիտություն սովորի:

Փ փ

փոստ - հիռուագրարարար կարիքի ի բաժանարար գրվի բոլոր արագրիբին:

Զմեռ եր:

Չյունը յեկել, կիտվել եր փողոցներում: Գյուղացիք ամեն գիշեր հավաքվում էին սրա-նրա ողբան զրույց անելու:

— Ախպեր, — շարունակեց Թաթոս բիձան, — ես նոր անունները չեմ կարողանում միտս պահել — գյուղխորհուրդ, կոմիտե, կոմսոմոլ:

— Արեհն մեռնեմ եդ անունները ղնողին, — ձայն տվեց ձրկ-նորս Զավաղը չեբուխը բերնից հանելով. — եդ անուններն ազատեցին մեզ պրիստովից ու քյոխովից: Չիու պես աշխատում էյինք, դառը դատում, դատարկ նստում:

— Ել ասում ես ու թողնում. հազիվ մարդու շարք ընկանք, թե չե առաջ տավարը մեզնից լավ եր:

Այդ ժամանակ ներս մտավ Թաթոս բիձու տղա կոմսոմոլ Փանին և ծիծաղելով ասաց.

— Այ պառավներ, ելի ձեր հին փեշակն եք բանեցնում. քանի անգամ եմ ասել՝ յեկեք խրճիթ-ընթերցարան. համ մաքուր, համ տաք, համ ել գիրք ու լրագիր կկարդան ձեզ համար:

— Լավ ես ասում, յես ու իմ հոգին, — վրա բերեց Թաթոս բիձան:

Այնուհետև ծերունիներն սկսեցին հաճախել խրճիթ-ընթերցարան:

Չ ձ

Չնչոյ Մփրամս Մի որում եմչում
ի 5 եփրար:
Չնչոյ Մփրամս արթի 180 և 200
ոարբի:

Փոքր հասակից Սաֆարը Ֆրիդոնի ֆուրգոնն եր բանացնում: Սաֆարը վոչ մի վարձ չեր ստանում:

Մի որ ընկերները Սաֆարին ժողով տարան: Նա զարմացել եր, վոր ընկերները ճառ էյին ասում, լավ-լավ բաներ էյին խոսում: Սաֆարի անունը գրեցին, վոր պրոֆմիուլթյան մեջ ընդունեն:

Մյուս որը Ֆրիդոնին կանչեցին գյուղխորհրդի գրասենյակ:

Նախագահը պահանջեց, վոր Սաֆարի հետ պայման կնքի:

— Ի՞նչ պայման, ի՞նչ բան: Տաս տարի նրան պահել եմ:

— Բայց մինչեվ հիմա նրան վոչ մի կոպեկ չես տվել:

— Ախպեր, չի ուզում, թող հեռանա տնիցս, տեսնենք կարո՞ղ ե գլուխ պահել:

Պրոֆմիուլթյունը Սաֆարի գործը տվեց դատարան: Ժողովողական դատարանը վճռեց Ֆրիդոնից յերեք հարյուր ուրբի գանձել հոգուտ Սաֆարի:

Մի ամսից հետո Սաֆարն անցել եր շրջգործ-կոմի ձիապանի պաշտոնին:

Ֆ Փ

Բարբա՛նկ, պայնան կասիր գրա-
վոր չեսով: Պայնանը քոսը բար-
բանկյանին կասարբիյու:
Պրոֆմիուլթյունից քոսը չնաս:



Կարմիր բանակը մեր յերկրի պահակն է

- Ո՞վ է պաշտպանում մեր յերկիրը:
- Կարմիր բանակը:
- Ո՞ւմ է պաշտպանում Կարմիր բանակը:
- Աշխատավորներին:

Կարմիր բանակը կազմված է բանվորներից և դյուղացիներից: Մեր բանակն ուժեղ է թե՛ զենքերով և թե՛ գիտությունով: Նա պաշտպանում է բանվորի և դյուղացու աշխատանքը: Ցարի ժամանակ զինվորը վոչ մի իրավունք չուներ: Նա մի մեքենա յեր կապիտալիստների ձեռքում: Այժմ կարմիր զինվորն ազատ է: Կարմիր զինվորը ոգտվում է քաղաքացու բոլոր իրավունքներից:

և

Կարմիր բանակայինն ապար է: Նա պաշարպանում է բանվորի և գյուղացու աշխատանքը: Կարմիր բանակը կապված է բանվորների և գյուղացիների:

Ա Յ Բ Բ Ե Ն


Ա ա,	Բ բ,	Գ գ,	Դ դ,	Ե ե,	Զ զ,	Ը ը,
Թ թ,	Ժ ժ,	Ի ի,	Լ լ,	Խ ք,	Մ մ,	Կ կ,
Հ հ,	Չ չ,	Ղ ղ,	Ճ ճ,	Մ մ,	Յ յ,	Ն ն,
Շ շ,	Ո ո,	Չ չ,	Պ պ,	Ջ ճ,	Ռ ռ,	Ս ս
Վ վ,	Տ տ,	Ր ր,	Յ ց,	Փ փ,	Ք ք,	Ֆ ֆ, Ու ու:

Ա ա Բ բ Գ գ Դ դ Ե ե Զ զ Ը ը
 Թ թ Ժ ժ Ի ի Լ լ Խ ք Մ մ Կ կ
 Հ հ Չ չ Ղ ղ Ճ ճ Մ մ Յ յ Ն ն
 Շ շ Ո ո Չ չ Պ պ Ջ ճ Ռ ռ Ս ս
 Վ վ Տ տ Ր ր Յ ց Փ փ Ք ք Ֆ ֆ

1 2 3 4 5 6 7 8 9 10

Թ Վ Ե Բ

1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12, 13, 14, 15, 16,
 17, 18, 19, 20, 30, 40, 50, 60, 70, 80, 90, 100.
 I, II, III, IV, V, VI, VII, VIII, IX, X, XI, XII.



ՆՈՐ ԿՅԱՆՔ ԿԱՌՈՒՑԵՆՔ

1. ԻՆՉ Ե ԱՍԵԼ ԸՆԿ. ԼԵՆԻՆԸ

Հասակավորներից շատերն ասում են. «Մեր ժամանակն անցել է. թնդ չերեխաները սովորեն»:

Մխալ ե այսպես մտածելը: Յերեխաները պետք է սովորեն և սովորում են: Սակայն հասակավորներն էլ չպիտի անզրագետ մնան:

Անզրագետը չի կարող յերկիր կառավարել: Անզրագետ բանվորը չի կարող լավ աշխատել, շատ ապրանք պատրաստել: Անզրագետ գյուղացին չի կարող իր անտեսությունը դարձացնել, չի կարող գյուղխորհրդի նախագահ կամ անդամ լինել, ժողդատարանում ատենակալ դառնալ, տրակտորի հետ գործ ունենալ: Անզրագետի համար այս բոլորը դժվար է: Յեթե անի չել, ոգուտը շատ քիչ կլինի:

Բանվորն ու գյուղացին իրենց գործն առաջ կտանեն այն ժամանակ, չերք գրագետ են, ուսում ու գիտություն ունեն:

Դրա համար էլ ընկ. Լենինն ասել է—

«ԻՆՉ Ե ՄԵՉ ՀԱՐԿԱՎՈՐ.

ՍՈՎՈՐԵԼ, ՍՈՎՈՐԵԼ, ՍՈՎՈՐԵԼ».



2 ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՅՄԱՆ ՄԱՍԻՆ ՀՐԱՏԱՐԱՎԱԾ ԴԵՎՐԵՏԻՑ

Վորպեսզի խորհրդային քաղաքացիները գիտակից կերպով կարողանան մասնակցել յերկրի քաղաքական կյանքին, ժողովրդական կոմիտեաների խորհուրդը վերջեց.

1) Ութից մինչև հիսուն տարեկան անզրագետները պարտավոր են գրագիտություն սովորել—մայրենի լեզվով կամ ռուսերեն, ինչպես իրենք են ցանկանում.

2) Ովքեր կխուսափեն այս բանից կամ կխանդարեն անզրագետների դպրոց հաճախելուն, պատասխանատվություն կենթարկվեն:

Ժողկոմխորհի նախագահ՝
Վլադիմիր Ուլյանով (Լենին):

Մոսկվա, Կրեմլ
26 դեկտեմբերի 1919 թ.

ԲԱՌԵՐԻ ԲԱՅՈՍՏՐՈՒԹՅՈՒՆ

Դեկրետ—կառավարական որոշք (բոլորին հայտարարած).
Կրեմլ—Մոսկվայի կենտրոնը. հին ժամանակ միջնաբերդ էր. այժմ Կրեմլում են գտնվում կառավարության բարձրագույն հիմնարկները.
Խուսափել—գործից փախչել, չկատարել.
Պատասխանատվության յենթարկել—պատժել, դատի տալ:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Անուն, հայրանուն յե՛վ ազգանունը գրվում է մեծատառով.
Որինակ՝ Սահակ Բարսեղի Արագյան:
Գրի՛ր քո անունը, հայրանունը, ազգանունը:
Արագրի՛ր այբբենական կարգով քո ընկերների անունները.
Որինակ՝ Արսեն, Բագրատ, Գրիգոր, Դանիել, Զարիկ,
Թաթուլ, Ժաննա...
Կարդա՛ յե՛վ արագրի՛ր այս հարցաթերթն ու պատասխանի՛ր հարցերին:

Խաչատրյան

Նիզամու
Նիսու
Խաչատրյան
Մարի
Վոլոդյա Մարտյան անդամ իմ
Խաչատրյան

(Կուրիյի) (ամիւ և անուրի)

Չնայած իրա
ճերմակող մազին՝
քուրսու տակ մինակ
գեղջկուհի ազին

ձմռան գիշերը
նստել ե արթուն,
ամուսնուց ծածուկ
գրում ե, կարդում:

Շատ դժվար հարց ե.—
հա մարդն ե փնջում,
լացկան մանկիկը
հանգիստ չի ննջում:

—Քնիր, ա կնիկ,
հերիք ե կարդաս.
դու որ ծերության
տերտեր պիտ դառնաս:

Խնդրելով մարդուն,
կաթ տալով վորդուն,
մեր գեղջուկ ազին
գրում ե, կարդում:



Ա Ր Տ Ա Գ Ի Ր

Այս վտանավորից 8 տող.

Հիշիր արտագրելու կանոնները.

1. Արտագրածը պետք ե առաջուց վարժ կարդալ:
2. Բառը լավ դիտիր, հետո արտագրիր:
3. Ամբողջ բառերով արտագրիր:
4. Կետերը նշանակիր:

1

Ամեն անգամ, յերբ Փիրուզը կաթի կճուճներն ու ձվերի զամբյուղը կաշարանից յետ եր բերում, մայրը հանդիմանում եր նրան.

— Ախշի, վճրտեղ ես: Քո ընկերները վաղուց են վերադարձել: Ի՞նչ ես քաշ գալիս վակղալում:

Ինչ իմանար պառավը, վոր Փիրուզի ուշն ու միտքը կաշարանում եր: Կարմիր դրոշակով վագոնը հեաաբբբբում եր Փիրուզին: Յե՛վ յերբ մի որ ծածուկ ներս նայեց, գարմացավ: Ահագին մարդիկ նստած գրում ելին, կարդում փոքր յերեխաների պես:

Փիրուզը կանգ առավ. յերկար դիտում եր:

Մի բանվոր նկատեց նրան, ձեռքից բռնեց, բարձրացրեց:

— Յեկ, մի քաշվի, քեզ ել կսովորեցնենք,—ասաց բանվորը շփոթված Փիրուզին:

2

Ու ամեն անգամ, կաշարանից յետ գալիս, Փիրուզը մտնում եր այդ վագոնը, նստում ու լսում: Վերջը ինքն ել սկսեց պարապել: Ու շատ չանցած, նա կարողանում եր վանկերով կարդալ:

Ընկերուհիները նրա գաղտնիքն իմացան: Չարմացան, վոր Փիրուզն արդեն կարդում ե. ուզեցին՝ իրենք ել սովորեն: Դիմեցին բանվորներին հետ պարապող ուսուցչին. սիրով համաձայնվեց պարապել աղջիկներին հետ:

Գյուղխորհուրդը մի մաքուր սենյակ հատկացրեց: Տան գործերից հետո աղջիկները հավաքվում ելին ու պարապում:

Ծերունիներն անցնում ելին պատուհանի տակով ու գլուխները տմբամբացնում:

Ամենից շատ դժգոհ եր մոլլան:

— Ահավատ բաներ են անում,—ասում եր նա ու զուրանից անգիր արած աղոթքներն եր փնթփնթում:

ԱՐՏԱԳՐԻՐ

Այս դասից 5-6 տող:

Հիշիր արտագրելու կանոնները.

Հետևիր նաև հետևյալ կանոններին.

1. Վերնագիրը գրիւ տողի մեջտեղը.
2. Նոր սկսելիս տողի խորքից գրիւ.

- 3. Ուրիշի խոսքերը և նոր հատվածները նոր տողից գրել:
- 4. Յերբ բառը չի տեղավորվում նույն տողում, անցկացրու մյուս տողը կամ վանկերի բաժանիլ:

Ո Ր Ի Ն Ա Կ

Ա-մեն անգամ Փի-բու-ղը կա-յա-րա-նից յետ եր բե-րում կա-թի կճու-ճը...

5. ՊԱՏԳԱՄՅՎՈՐՈՒՅԻՆ

1

Շաբաթ յերեկո յեր: Գյուղացիք հանդից վերադարձել, պատերի տակ ծալապատիկ նստել, զրույց ելին անուամ: Սաքո ապերը տեսնելով Շուշանին՝ ասաց.

— Հե՛լ անցած որեր... առաջ ո՞վ կարող եր դեմս խոսել. ես բալլի ի կուլթունը բողբոլին ճամպից հանել ե. հրես իմ հարսը, վոտնամանները կանցիլարի դռներին ե մաշում:

— Շուշան ջան, եդ ո՞ւր ես շտապում,—հարցրեց Խեչոն:

— Եսոր խորհրդի ժողով ե,—եդ ի՞նչ եք նստել պատերի տակ ու սրան-նրան բամբասում:

— Դեհ, ի՞նչ անենք,—պատասխանեց Խեչոն. — մեզ ես ե մնացել: Գործի գլուխ չաչակավորներդ եք անցել:

— Ի՞նչ ե, հավան չեք,—ասաց Շուշանն ու յերեսը շուռ ավեց:

2

Հանկարծ մեկը պինդ բռնեց Շուշանի թևը: Շուշանը վախեցած յետ նայեց: Վարսոն եր, աչքերը կարմրած:

— Ախշի, յերեսդ ինչի՞ յե կապտել, մի ասա,—հարցրեց Շուշանը:

— Ել ի՞նչ պիտի լինի... Խեչոն յեկավ, իմացավ, վոր ժողովի յեմ գնացել, գողգողաց, ծեծեց ու տանից դուրս արավ:

— Գնանք,—ասաց Շուշանն ու առաջ ընկավ:

Յերբ նրանք ներս մտան, Խեչոն կատաղածի նման հարձակվեց, ուզում եր խփել կնոջը: Շուշանը բռնեց նրա կուռը ու վրան գողաց. «Ո՞վ ե ավել քեզ եդ իրավունքը»:

— Իսկ ո՞վ ե քեզ իրավունք ավել խալիսի կնանոց խելքից հանել: Հապա թող ուրիշ տղամարդկանց հետ նստի զրից անի:

— Խեչո, վաղուց են եդ ժամանակներն անցել, վոր կնոջդ դուրս անես: Պատգամավորուհի յե, պիտի ժողով գնա, աշխատի: Մենք կգնանք, հապա դու մի թողնի:

Խեչոն զգաց, վոր մենակ ե մնացել: Մոտեցավ սենյակի դռանը, քաց արեց ու տեսավ, վոր պնուավ մայրը անքանքալեն յերեխաներին ե կերակրում: Գլուխը թափ տալով մրմռաց.
— Ես հին ոջախը բանդվելու յե, ելի...

Ա Ր Տ Ա Գ Ր Ի Ր

Սաքոյի և Շուշանի խոսակցութունը:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Ուրիշի խոսքերից առաջ գրվում ե գիծ (—):

Ս Ո Վ Ո Ր Ի Ր

Կետերի անունները.

, ոտորակետ
, միջակետ

, վերջակետ
... բաղմակետ

6. ԳՅՈՒԼԽԱՆԳԱ

«Պարսկուհի, աչքերդ նշի ձև են,
Սաթի պես բիբերդ սև...»

Գյուլխանդա, չարսավդ սև սաթին ե,
Ամպի պես պատել ե բեզ».

Այսպես են յերգել քեզ, պարսկուհի,
Աֆիոնով հարբած Իրանում:
Բացց ո՞ւր ե Իրանը քո հիմա,
Դու ապրում ես ուրիշ մի յերկրում:

Հիմա դու կ'իՄ ունես դոշիդ,
Գյուլխանդա, ջահել կոմսոմոլիա,
Դու ցրել ես դարերի փոշին,
Քեզ վրա ել չարսավ չկա:

Բացց գիտե՞ս՝ սերունդներ մեռան,
Թաջիրի ու խանի հլու.
Ու նրանց շիրիմների վրա
Նորաբաց մի լալա յես գու:

ԲԱՌԵՐԻ ԲՄՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

սաթ—քահուրբար
բիբ—աչքի վոսպը
շիրիմ—գերեզման
հլու—հնազանդ
լալա—պուտ (վայրի խաշխաշի
ծաղիկ)
նուշ—բաղամ

աֆիոն—հարբեցնող բույս ե.
Իրան—Պարսկաստանի հին անունը
Կ'իՄ—Ցերիտասարդության կոմունիստ. Ինտերնացիոնալ
Թաջիր—վաճառական

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ա, ո, ու, ի, ե, ը—ձայնավոր հնչյուններ են

Ա Ր Տ Ա Գ Ր Ի Ր

այնպիսի բառեր, վորոնց մեջ կա 1, 2, 3 ձայնավոր:

Որինակ՝ 1. Յեզ պես... 2. սաթի, յերգել... 3. պարսկուհի, Գյուլ-խանդա...

7. ԱՌԱՆՑ ՉԱԴՐԱՅԻ

Հոկտեմբերյան հեղափոխության 11-րդ տարեդարձն են: Անսովոր կենդանություն են Յերևանի թուրք կանանց ակումբում:

Չադրաների մեջ փաթաթված կանայք ինչ-վոր մի բանի մասին քչփչում էին:

Ժամը 10-ին հավաքվեցին ակումբի դահլիճը:

Արագ քայլերով ներս մտավ չադրայի մեջ կոյուղած 60 տարեկան Խաչա խալան և առանց շուրջը նայելու բեմ բարձրացավ:

— Ընկերուհիներ, բավական ե ինչքան գերի մնացինք կրոնին:

Այս զգվելի չադրան խեղդել ե մեր մեջ ամեն մի զգացմունք: Վերջ կանանց ստրկության: Հետևեցեք իմ որինակին, —ասաց նա հուզված և դեն շարտեց իր չադրան:

Կանանցից շատերը հետևեցին Խաչա խալայի որինակին, հանեցին իրենց չադրաները և ավին ակումբի վարիչին, վոր մանկատուն ուղարկի:

Չադրաներից ազատված թրքուհիներն անսահման ուրախ էին:

Յերեսունից ավելի կանայք խորապես զգում էին իրենց մարդկային արժանիքն ու իրավունքները:

8. ՈՒՍՏԱ ՊՁՈՒԿԸ

Ուստա Պզուկի քեֆին քեֆ չէր հասնի. փողն իրեն-իրեն եր գալիս. կերածն ել միշտ՝ մեղր ու կարագ, տուրմա ու քուֆթա:

Խանութը քաղաքի բանուկ փողոցի վրա, ինքը մկրաար ձեռին ձևում եր, չորս-չորս աշակերտներն ել նստած կարում էին, հա կարում:

Ժամանակն անցավ...

Աշխարհը փոխվեց...

Թեև մեղրն ու կարագը, տուրման ու քուֆթան անպակաս էին Պզուկի սեղանից, բայց ել «աղա» կանչող չկար, — «ընկեր» էին ասում:

Բայց անա մի որ աշխատանքի տեսուչը խանութ մտավ:

— Վարպետ, քանի՞ աշկերտ ունեք:

— Չորս:

— Ամսական ի՞նչ եք տալիս:

— Ա.մ...սա...կան, — կմկմաց Պզուկը, ու լեզուն կապ ընկավ:

— Ի՞նչ ամսական, ի՞նչ բան, — ձայն տվեց աշկերտներից մեկը, — ես չորս տարի յե՛՛ ձրի ծառայում եմ:

— Վարպետ, ես աշկերտներին ամսական քսան ուրբլի փող պիտի տաս: Բացի այդ, կզնաս ապահովագրական գանձարկը և կապահովագրես: Հակառակ դեպքում խանութը կփակենք:

Ասաց ու գնաց:

Վարպետ Պզուկը կարծես կայծակնահար յեղավ, ձայն չհանեց:

— Ուստա Պզուկ, բեֆդ վո՞նց ա, — ասացին աշակերտներն ու մի կուշա ծիծաղեցին:

Արապյակյան

1929թ հոկտեմբերի 30-ին: Արապյան դիրքակ Առաքյալներից իմ արարածսինյա աշխարհումսի վարչապետությունը — վից ուսուցիչ 13 կուսիկ (6 ու 13 կ.):

Ասրգիս Գալոյան

Ապամոտարյան փողոց N 37

9. ԿՈՊԵՐԱՏԻՎԸ ԲԱՑՎԵՑ — ՍԵՐԳՈՅԻ ԽԱՆՈՒԹԸ ՓԱԿՎԵՑ

Յերեք ամիս ե, ինչ նորաշեն գյուղում կոպերատիվ ե բացվել: Գյուղացիներն ել հանգիստ չունեն. հենց վոր մի բան ե պապատում, վաղ են տալիս կոպերատիվ:

— Ինձ մի կիլո շաքար կշո՞ր...

— Ալեքսան արպեր, մի տուփ լուցկի տո՞ւր:

— Ա.դ...

— Աղը հատել ե:

— Յ մեար բյազ...

Ու այսպես ամեն որ...

Կոպերատիվի առևտուրը քանի գնում՝ ծավալվում ե...

Կոպերատիվից քիչ հեռու գտնվում ե Սերգոյի փոքրիկ խանութը: Կոպերատիվի բացվելու որից նրա առևտուրը պակսել ե: Որերով նրա խանութը մի գյուղացի անգամ ներս չի մտնում: Ո՞վ ե գժվել՝ Սերգոյի վատ ապրանքը թանգ գնով առնի:

— Չեղձվ,—ինքն իրեն գլուխը թափ տալիս ու փնթփնթում ե Սերգոն:—Թե ապրանքս եժանացնեմ, են ժամանակ վնաս կանեմ: Լավ ե վերջ տամ խանութիս:

Գրիբ ձեր կոպերատիվում յեղած ապրանքների անունները որինակ՝

Թեյ, նավթ, սապոն, չիթ, մեխ...

Այժմ գրիբ՝ ինչ ապրանք պակասում ե ձեր գյուղի կոպերատիվում:

Կոպերատիվի անդամին

Կոպերատիվ մերի սիրով, վոչ թի միևսկ
այլ բնակիրով:

Կոպերատիվից գնիր ամեն ինչ, իսկ
մասնավորից վոչ ինչ:

Խարուստիքի մարչուրայից կամեր
վոր կոպերատիվը լավ բանի:

10. ՆՈՐ ԳՅՈՒՂԸ

Կարմիր գյուղի մեջտեղում
նոր գարոցն ե փառավոր,
ուր մանուկները խաղում,
սովորում են ամեն որ:

Կոպերատիվ ե դարձել
մեծ խանութը Մարգարի,
ուր գնում են ջահել, ծեր,
նավթի, աղի, շաքարի:

Ընկեր նազրուն ե նստում
ցածրիկ շենքում մոտակա.
նոր են ընտրել խորհրդում
գյուղխորհրդի նախագահ:

Թեև շատ բան կա թերի,
հինը դեռ շուտ չի կորչի,
բայց փոխվել ե կյանք, կենցաղ,
ել են նախկին գյուղը չի:

ԲԱՌԵՐԻ ԲԱՅՍՏՐՈՒԹՅՈՒՆ

Թերի—կիսատ | կենցաղ—նիստ ու կաց

Գրիբ գյուղխորհրդի կին անդամների և պատգամավորուհիների անուն-
ազգանունները:

Հիշիր սովորած կետերի անունները:

Գ Ի Տ Ի Ր

- 1. Յերբ ենք վերջակետ դնում:
- 2. Յերբ ենք ստորակետ դնում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

- 1. Յերբ միտքը (ամբողջական խոսք) վերջանում ե, մենք դադար ենք առնում: Այդ դեպքում դնում ենք վերջակետ (.):
- 2. Յերբ ձայնը բարձրանում ե ու յերկարում, դնում ենք ստորակետ (,):

11. ԱՌՈՂՋ ՅԵՐԵԽԱՆ ՍՈՐ ՌԻՐԱՆՈՒԹՅՈՒՆՆ Ե

1

Համիկը նազիկի առաջին յերեխան եր. նազիկը չգիտեր՝ ինչպես խնամեր նրան. ինչ վոր ասում եյին, աջնպես ել անում եր: Կաթը քիչ եր, սրա համար ել հացը ծածում եր ու բերանից հանելով փոքրիկին եր տալիս:

— Չենը կորի,—ասում եր կեսուրը,—կաթ տուր յերեխին:—

Նազիկը վերցնում եր կովի հում կաթը ու շատ անգամ առանց յեռացնելու տաք շուր ավելացնում, Համիկի բերանն եր լըցնում:

Կապկապում եր յերեխին բարուրի շորերով, ուշ-ուշ եր փոխում: Իսկ յերբ փոքրիկը լաց եր լինում, որորում եր հա որորում:

2

Համիկը հիվանդացավ, տաքություն ունեցի:
Մարդը գիշերը ճչում եր, առավոտը բժշկի տարան:
Բժիշկը շատ գայրացավ:

— Այ, կողքի գյուղում կոնսուլտացիա կա, ինչո՞ւ չես մեկմեկ գնում խորհուրդներ հարցնում: Լավ իմացիր՝ ծծկեր յերեխի ամենալավ սնունդը մեր կաթնն ե: Յեթե բիշ ե կաթդ, կովի կաթ

տուր. բայց անպատճառ յեռացրու: Գիշերը մի կերակրի, խմիչք բոլորովին մի գործածի: Յերեխին շոկ քնացրու. չպետք է որորել, թող իր անկողնում հանգիստ քնի: Մի փաթաթի. մաքուր պահի ու շուտ-շուտ-լողացրու: Մաքուր ոգում պահիր:

Բժիշկը Նազիկին մի պլակատ տվեց:

—Տար,—ասաց բժիշկը.—տանը գրագետ մարդ կան, թող կարդա, բացատրի:

12. ՄՍՈՒՐԸ ԿՆՈՋ ՈԳՆԱԿԱՆՆ Ե

1

Վարդուշը ակտիվ պատգամավորուհի յեր:

Կանայք Վարդուշին շատ եյին սիրում, իսկ տղամարդիկ նրան տեսներով կատակով ասում էին.

— Յեկավ կանանց աղվակասք:

Այսօր ել Վարդուշը մսուրի հարցն է գրել գյուղական ժողովում:

— Դուք, տղամարդիկ չեք իմանում՝ ինչ որ է քաշում կինը:

Չեզ վոր հարցնեն, կասեք.—ինչ է անում վոր: Լուսը բացվում, չի բացվում, կնոջ տանջանքն սկսվում է. հա թոնիրը վառիր, հա կովը կթի, նախիր ուղարկի, հորթերին կերակրի, կրակ արա, հնձվորին ձաշ տար, լվացք արա, յերեխին լողացրու, հավերին կուտ տուր: Բա յերեխեքը—խաղացրու, կշտացրու, քնացրու... Մի խոսքով՝ գլուխ է պետք, վոր դիմանա...

— Դե, ասա՛, կինը գնա, շուրն ընկնի, ելի՛, ընկեր Վարդուշ,— վրա բերեց կատակասեր համբոն:

— Չե, եդ չեմ ասում: Պետք է ճարը գտնել. ա՛յ, որինակ, Լենինականը, Ն.-Բայազետն ես ամառ, Ղամարլուն՝ անցյալ ամառ մսուր բացին, կանայք շունչ քաշեցին: Ի՛նչ, մենք նրանցից պակաս ենք. ինչո՞ւ մենք չենք բանալ:

— Կբանանք, Վարդուշ ջան, կբանանք,— ձայն տվին միքանի ժողովական կանայք,— միայն թե դու մեզ հետ լինես:

2

Կանայք գործի անցան:

Մսուրի համար շատ բան է պետք. մահճակալ, անկողին, ամանեղեն, լավ սնունդ, խոհանոց: 10—12 յերեխի համար պետք է մի բշտկուհի կամ բուժակ, մի քույր կամ դայակ, խոհարար ու լվացարար: Վճրատեղից ձեռք բերեն այդքան փող, մրջյոցներ:

Կանայք ճարը գտան. դիմեցին դես ու գեն, խնդրեցին, համոզեցին: Գործը կարգի ընկավ:

Առբաժինը մի բուժակ ուղարկեց: Կինբաժինը պատգամավորուհիներից հերթապահ դայակներ նշանակեց: Կոպերատիվը խոստացավ մթերքներով ոգնել: Ամանեղենը, անկողինները աներից հավաքեցին:

Գործը յեռում եր: Չեր անցել մեկ ամիս, գյուղում արդեն գործում եր մսուրը:

Կանայք շունչ քաշեցին, մանավանդ մայրերը:

Բոլորն ել համոզվեցին, վոր մսուրը կնոջ զլխավոր ոգնականն է:

ԲԱՌԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

ակտիվ—գործունյա, հետաքրքրվող դայակ—յերեխին խնամող, պահող աղվակատ—փաստաբան, իրավաբուժակ—Ֆելդշեր պաշտպան

Ուշադրութուն դարձրու կետերին և արտագրելիս նշանակիր.

— գիծ, շեշտ, ° հարցական, ,, « կամ » չակերտ.

Գիտիր, յերբ ենք դնում շեշտը (տանր, կթի) կամ հարցական (ինչ է...):

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Մեծատառով են սկսվում նաև յերկրների, գյուղերի, քաղաքների, գետերի ու սարերի անունները:

Որինակ՝ Ղամարլու, Նոր-Բայազետ, Քանաքեռ, Իրան, Յերևան, Հրազդան, Արագած:

Գ Ր Ի Ր

Այսպիսի միքանի հատուկ անուններ:

13. ՈԳԱՆ ՈՒ ԽՐՃԻԹԸ

(Գյուղացու պատմածը)

Մեր գյուղը հիմի ել են չի: Առաջ, հենց վոր կալուկուտ վերջացնում էյինք, հավաքվում էյինք Ալեքսանի կամ Հայրապետի սզեն, ծխում ու խոսում, հեքիաթներ պատմում, դեսուգենից յեկած սուտ լուրերին լսում:

Կեցցե մեր կոմսոմոլ Արտաշը՝ Մի որ յեկավ, թե— ա՛յ, Մուքի, ինչո՞ւ յեք իզուր տեղը ժամանակ կորցնում եդ ոգեքումը: Մի տեղ հավաքվենք, խոսենք, թերթ ու գիրք կարդանք, մեզ գյուղի ցավերի մասին մտածենք: Գյուղի չլավորները քեզ սիրում են, արի համոզի՛ նրանց, մի խրճիթ ել մենք բանանք:

Ասինք ու արինք:

Գնացինք ուսուցչի մոտ: Այ ի՛նչ եմ ասել. խոսքը կրկնել չավեց: Յերեք որ հետո խրճիթը պատրաստ եր. Արտաշը, ուսու-

ցիչը, գյուղատնտեսը, բժիշկը, բջի քարտուղարը, բոլորն ել գործի անցան: Մի կյանք, մի աշխատանք սկսվեց մեր խրճիթ-ընթերցարանում:

Ալեքսանի ու Հայրապետի քեֆին կպանք. ողեքը կամաց-կամաց դատարկվեցին: Կուլակները նրանց ողեքում սկսեցին քեֆեր սարքել, գյուղացիներին հյուրասիրել, բայց իրենց տերերի ու հին քյոխվի հետ մենակ մնացին:

Չքափորութունը կապվեց խրճիթի հետ: Ինչո՞ւ չեւ չպիտի կապվի. գիրք կա, թերթեր կան. կարգում են, պատմում, ամեն ինչի մասին զրույցներ են լինում: Յերգն ու պարն ել պակաս չի մեր խրճիթից. ապրեն մեր պիտներները:

Գ Ր Ի Ր

Ինչ թերթեր են ստացվում ձեր խրճիթ-ընթերցարանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Թերթերի ու պրքերի անունները սկսվում են մեծատառով և զրվում են չափերտների մեջ. որինակ՝ «Մաճկալ», «Անուշ», «Գալուստի վիկը», «Ավանգարդ»:

14. ԱՊՐԻ—ՏՈՒՐ, ՄԵՌՆԻ—ՏՈՒՐ

Գյուղացի Մարկոսի յերեխան հիվանդ եր. Մարկոսը յեկավ տերտերի մոտ ու ասաց.

— Տերտեր ջան, մի նոր ծնված յերեխա ունենք, միքիչ հիվանդ է: Արի կնքի, գուցե լավանա:

— Լավ, ինչ կըլնի վոր, գնանք, վորդի: Տերտերը կնքեց յերեխին ու մի կթոց դարման վերցնելով՝ հեռացավ:

Ճանապարհին շները հարձակվեցին տերտերի վրա: Տերտերը մի ձեռքով կթոցը բռնած՝ մյուսով շներին ծեծում ե ու գոռում.

— Անիծյալ լինեք, չեք տեսնում, վոր բեռս ծանր ա, ինչ եք վրես հարձակվում:

Միքանի ժամից Մարկոսը նորից յեկավ տերտերի մոտ ու խնդրեց, վոր գնա նոր կնքած յերեխին թաղի:

Տերտերը թաղումի համար պահանջեց յերկու կթոց դարման, վորովհետև, ասում է՝ թաղումն ավելի դժվար է կնունքից: Մարկոսը շատ խնդրեց, վոր մի կթոց դարմանով թաղի, վորովհետև իր դարմանն ել քիչ եր, բայց տերտերը չհամաձայնեց:

— Յես հո քու հոր մշակը չեմ,— ասում ե, իմ ինչ բանն ա, թե դարմանդ քիչ ա:

— Ախր, տերտեր ջան, յեզներս սոված կման, կկոտորվեն:

— Զհանդամը թե կկոտորվեն:

— Տո, ջհանդամը դու գնա, թալանչի...—գոռաց Մարկոսը գուլնը գցած:

Տերտերը փասա-վուսեն քաշեց, իսկ Մարկոսը կանչեց գյուղի պիտներներին ու իր յերեխային տարան թաղեցին առանց տերտերի, առանց դարմանի ու ծախսի:

Գ Ր Ի Ր

1. Գյուղում համ տանն է «կարմիր կնունք» կատարվել:

2. Ինչ նոր անուններ են դրել յերեխաներին:

Անուն-ազգանունները մեծատառով գրիր:

Ա Ր Տ Ա Գ Ր Ի Ր

Այս դասից սկզբի յերեք պարբերութունը (նոր տողից—նոր տող):

Ը Ն Գ Գ Ծ Ի Ր

Այն բառերը, վորանց պատահում է յու կամ յե. որինակ՝ յե-րեխա-

Գ Ր Ի Ր

Ինքդ միքանի այգպեսի բառեր որինակ՝ յերբ, յուղ...

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Յու, յա, յո, յե, յի—կոչվում են յերկձայն:

15. ԳԵՂՉԿԱԿԱՆ յԵՐԳԵՐ

Մաշինան քաշել եմ վարի,
կոլեկտիվ հողերում անձիր.
Շողեր ջան, ուշացար, ուր ես,
յեկ, ջանս, յեկ, նազ մի անի:

*
**

Բամբակի քաղհանը թո՛ղ, յեկ,
ջիգարս երվում ե, ջուր բեր.
արևը դաղում ե, ջուլս յեկ,
մի կուլա գլզլան ջուր բեր:

*
**

Դե ջան հա՛, տրակտոր, վարի,
Շողերը դուրս յեկավ արտից:

պողպատե ընկերս վարի,
Ղան անենք, շուտ դուրս գանք ծրից:

*
**

Շողերը, աչքերը մթին,
Շողերը՝ թշերը լուսին,
Շողերը բռնում է եշխով
կոլեկտիվ նոր կյանքի ուղին:

ԲԱՌԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

անծիր—անծայր

ուղի—ճանապարհ

ԲԱՐՁՐԱՑՆԵՆՔ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

16 ՏՐԱԿՏՈՐԻ ՅԵՐԳԸ

Հե՛յ Ղան ընկեր, պողպատ ախպեր,
դե շուտ արի, գալդ բարի,
տրակտոր Ղան, մեր նո՛ր ընկեր,
քեզ է սպասում հանդը գյուղի:

Մեր սրտի հո՛ւյս, մեր աչքի լո՛ւյս,
բեր ճակատդ կարմիր կապենք,
ման յեկ գյուղում, յերթդ անուշ,
գուլթան ու չուլթ թող դարդոտվեն:

Դու վոր մերն ես, ել ինչ կուլակ,
ել ինչ գորբա մեզ կնեղի.
սարք ու պատրաստ տասր գուլթան
փոչինչ բան են քո առաջին:

Դու վոր յեկար, մեր նոր ճամպան
շատ հեշտացավ, ել դարդ չունենք.
դե, քեզ ցույց տուր, տրակտոր Ղան,
հինը բանդենք, նորը շինենք:

Հ Ա Ր Ց Ե Ր

1. Ինչո՞ւ չե տրակտորը պողպատ ախպեր:
2. Ինչո՞ւ չե տրակտորը նոր ընկեր:
3. Ինչո՞ւ չեն դարդոտվում չուլթն ու գուլթանը:

Հենց վոր գյուղում ձայն ընկավ տրակտորի գալու մասին,
բոլորը դուրս թափվեցին:

Տրակտորը կանգ առավ կոպերատիվ խանութի առաջ. Կոմյե-
րիաներն ու պիոներները շրջապատեցին մեքենան: Տղաներից մեկն
սկսեց ճառել: Յերեխաները ճշարով ու մեկ-մեկու հրելով մոտենում
էին ձեռք տալիս տրակտորին: Կանայք նայում էին հեռվից՝ կը-
տուրներից, շեմքերից ու իրար հետ փսփսում:

Մադոն, վոր գյուղի ունեւորներից եր, մոտեցավ տրակտորին,
ծուռ ծուռ նայեց ու ասաց.

— Ախպեր, թե իմ խելքը բան ա կտրում, սա վարող պը-
տուղ չի:

Վարպետ Վոսկանը կատաղեց.

— Դե սպասիր, սաղ որը քեզ պիտի ման ածեմ մեքենայի
յեակից:

Մադոն վախից չեա քաշվեց:

Վոսկանը պտտեց տրակտորն ու դանդաղ շարժվեց դեպի ու-
սումնարանի արտը:

Հենց վոր վարն սկսվեց, գյուղացիների դեմքը պաշտառացավ:

— Այ տղա, սրան մտիկ է, հենց վարում ա հողը, կասես՝
բմբուլ ա շուռ տալիս:

— Պա՛, սա հո վարում չի, սա ուտում ա հողը, — ասում եր մի
ուրիշ գյուղացի:

Ամենից շատ ուրախ եր Դանելը: Ժպիտը դեմքին, հենվելով
տրակտորի վրա՝ ասաց.

— Այ Ղանիդ մատաղ հա՛, ինչ կլինի մեր նեղ մաջալին միշտ
եսպես հասնես: Յարաք սրա հնարողն ո՞վ ա, մի գնամ՝ ճակատը
պահեմ: Տղերք Ղան, սրանից դենը սա յե մեր դենքն ու բերդը՝
նա վոր կա, մեր աչքի լիսն է:

Գյուղում այդ որը մեծ տոն եր:

18. ՀՈՂԻ ԳԱՆԳԱՏԸ

«Աշնանը վռազ հափաքում, կոխտտում են, անտեր թողնում ու
գնում: Հենց վոր որերը տաքանում է, բերում են անտեր վեակին,
չուլթը Ղանս ճանկրտում, վախտ ու կեղտոտ ցորեն են շաղ տալիս,
թե՛ բերք տուր, բուսցրո՛ւ: Ախր վո՞նց բուսցնեմ, ի՞նչ բուսցնեմ: Մի
մասը խոտ ու պրշուկ, մյուս մասը գյուլուլ ու փոփշուկ, խոտերը

արմատներն ել վրա չեն տալիս, ցորենի ծիլերը խեղդում: Դեհ, ասեք տեսնեմ, թե վո՞րը բուսցնեմ: Ա՛յ խելոք հողատեր, մի առաջ արի, յերեսս փեշնով շաղ տո՛ւր, վեակով մի լավ չանգոխր, հետո գուլթանով լավ հերկիր, մաքուր, ընտրած ցորեն ցանիր, վրայից զլորան զլորի՛ր, թեթե փոցխիր, ավելորդ խոտերը քաղհանիր, տես, թե ի՞նչպիսի արտ եմ բուսցնում, ինչքան ցորեն, գարի ու դարման եմ տալիս, ե՛: Մի հսպես արա՛ ու փորձիր: Համ ել եդ ինչ հիմարութիւնն ե՛ ամեն տարի ցորեն կամ գարի ցանելը: Եղբան խելը չունի մեր ւերը, վոր հասկանա, թե ցորենի ու գարու համար ել ուժ չի մնացել ինձանում, չիմա հարկավոր ե, վոր կարտոֆել ցանի կամ տակ, կամ գազար, կամ հենց ուղղակի կորնգան, սիրի-սիրի կամ մի ուրիշ խոտ՝ հերթով հետո կարող ե նորից ցորեն ու գարի ցանի: Թող փորձի, մի այդպիսի բան անի. ու տեսնի՛ վո՞նց ե շենանում ինքն ել, մենք ել...»:

ԲԱՌԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

վեակի - չութ	զլորան - տափան
պրչուկ - վայրի խոտ	կորնգան - ցանովի խոտ

ՀԵՌԱԳՐԻ ՈՐԻՆԱԿ

Վաղարշապատ հողբաժին

Հայտնեցեք հողաբաժանման ժամանակը

Բաղալյան

Ոչական Սարգիս Բաղալյան

19. ՍԵՐՄԱՅԱՆ

Հազար յերանի	քեզ ե իր վերջին
քեզ, ժիր սերմնացան՝	բարեր տալիս:
դաշտը գեղանի	Գետակը ձորում,
չես թողնում խոպան:	թռչունը ոգում,
Վառ արշալուսին	բոլորն ել սիրով
որը՝ բացվելիս՝	քեզ են վողջունում:
քեզ ե առաջին	Հազար յերանի
վողջունը տալիս:	քեզ, ով սերմնացան,
Իրիկնադեմին	դաշտը գեղանի
որը՝ մթնելիս՝	չես թողնում խոպան:

ԲԱՌԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

գեղանի - գեղեցիկ, սիրուն	վողջուն - բարե
խոպան - անմշակ, վայրի	

Հ Ա Ր Ց Ե Ր

1. Յերբ ե բացվում որը (վոտանավորի բառերով).
2. Յերբ ե մթնում որը (" ")
3. Որվա մյուս մասերը վորո՞նք են (ցերեկ, կեսօր...):

Գ Ր Ի Ր

Շաբաթվա որերի անունները կարգով:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Շաբաթ, հինգշաբթի, կիրակի, չորեքշաբթի, ուրբաթ, չերեքշաբթի, չերկուշաբթի:

20. ՍԵՐՄԱՅԱՆ ՄԵՔԵՆԱ

Ցանել կարելի չե՛ ձեռքով կամ մեքենայով: Ձեռքով հավասար ցանելը դժվար ե: Մեքենայով ցանքան ավելի արագ ե կատարվում. մինչդեռ ձեռքով մի որում 3 հեկտար հազիվ ե ցանվում, մեքենայով կարելի չե ցանել մինչև 5 հեկտար:

Մեքենայով ցանքսը լինում ե շարքերով, և սերմ ել քիչ ե գնում՝ հեկտարին 118 կիլո. այնինչ ձեռքով ցանելիս հեկտարին գնում ե 192 կիլո:

Մեքենայով ցանելիս սերմերն արտում հավասար խորության են ընկնում և ծլում են միաժամանակ ու մի բարձրության: Ձեռքով ցանելիս սերմերի մի մասը խորն ե թաղվում կամ յերեսն ե մնում ու չի ծլում:

Սերմնացան մեքենայով ցանքսը լավ ե դուրս գալիս, սերմը սերմին չի խեղդում, բոլոր սերմերն ել ազատ աճելու տեղ ունեն:

Մեկի ուժը չի պատի սերմնացան մեքենա գնելու, բայց վոր միասին գնեն, ամեն մեկին քիչ ծախս կնստի:

21. ԱՐՏԻ ՅԵՐԳԸ

Ծլել ե արտս,	Խնդուն, զվարթ ե,
ծփում ե արտս,	նոր բացված վարդ ե,
կորել ե դարգս, ջան:	արտս ազատ ե, ջան:

Կանաչ է դաշտը,
կորավ յերաշտը,
ամառը հաշտ է, ջան:

Յեկել է շուրը,
խնդության ուրը,
գլորալ տրակտորը, ջան:

Գ Ր Ի Ր

Այս վոտանավորը, բառերը վանկերի բաժանած, որինակ՝ ծը-լել է ար-տըս... կո-րավ յե-րաշ-տը:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Վանկերու կանոնները.

1. ամեն մի վանկում լինում է մեկ ձայնավոր.
2. յերբ ձայնավորը ը-ն լսվում է, վանկերու ժամանակ գրվում է.
3. յերկձայնները (յա, յո...) չեն բաժանվում.
4. բաղաձայնը միշտ միանում է հաջորդ ձայնավորին:

22. ԳԱԼՈՒՍԻ ՎԻԿԸ

Վիկը տուն կրելիս Գալուստի աչքովն ընկավ Ռուստամ ապերը, վոր ժամի պատի տակ նստած թագրեհ էր քաշում: Միտն ընկավ Ռուստամ ապոր խոսքը.

— Ես խոս... տեսնենք մեր տավարը կուտի...

Գալուստը նայեց Ռուստամ ապոր կողմն ու ծիծաղելով հարցրեց.

— Ռուստամ ապեր, մեր հողը կընդունի, թե չե:

Ռուստամ ապերը չպատասխանեց: Նա դեռ յերեկ էր լսել, վոր Գալուստը հարյուր քսան խուրձ խոտ է հարել իր փքրիկ տեղից: Լսել էր ու չեր հավատացել...

Հանկարծ պատի տակից մեկն ասեց.

— Դու են ասա, եղ վիկի խոտը ձին կուտի...

— Բերենք, փորձենք, - վրա բերեց մի ուրիշը:

— Ռուստամ ապոր ձին բերեք, - ասաց մի յերիտա... րդ:

Գալուստը բեռը վեր դրեց, բերեց մի խուրձ, դրեց ձամպլե մեջտեղը:

Ռուստամ ապոր ձին բերին: Ձին մոռթը մի կողմից կոխեց խուրձի մեջ և սկսեց ուտել ախորժակով.

— Ա՛, վոնց ա գելի պես ուտում ե՛, - ասաց մեկը:

— Ա՛յ քեզ խոտ: Այս ձմեռ երնեկ քո տավարին, Գալուստ: Մերը չոր դարման ա ուտելու, քոնը՝ վիկի խոտ:

Գալուստը խոտը բարձեց, սալը շարժեց: Մի անգամ ել նայեց Ռուստամ ապոր կողմը, ծիծաղելով հարցրեց.

— Ռուստամ ապեր, կերճով, թե չե...

Ռուստամը չպատասխանեց:

— Ինչքան դարմանք բան կա աշխարհում, - ասաց գլուղացիներից մեկը գլուխը շարժելով:

— Դեռ վորտեղ ենք, - ասաց Գալուստն ու անցավ:

23. ՀՆԶՎՈՐԸ

Տխուր է գնգում գերանդին,
հասկերը շրշում են - «ուշ է...»,
ինչքան էլ յեռաս յեռանդից,
գերանդին արդեն անուժ է:

Յերբ ենտեղ հնձվոր մաշինան
շափշափում է շախին յեռանդից,
շպրտում է խուրձերը շինած, -
էլ սըր է գնգում գերանդին:

Ե՛յ - քոնն է հունձը, մաշինա -
տխուր է գնգում գերանդին:

Հ Ա Ր Ց Ե Ր

1. Ինչ՞ալ յե գերանդին տխուր գնգում:
2. Ինչ՞ալ գերանդին անուժ է:
3. Ո՞ւմ է պատկանում հունձը:

Արտագրիք.

Գլուղացիների Գալուստի
Գալուստ, Գալուստ, Գալուստ, Գալուստ,
Գալուստ, Գալուստ, Գալուստ, Գալուստ:

24. ԿՈՒԵՎՏԻՎ ՀՈՒՆՁԸ

Կուեկտիվն իր արտերը հնձում էր: Հասկերը հեալով փռվում էլին հնձող մեքենայի տակ:

Կուեկտիվի նախագահ Ալեքսանը հագել էր իր հին բանվորական բլուզը: Յեռանդով փուռում էր հասկերը: Կուեկտիվի անգամներն աշխուժ աշխատում էլին:

Յերեսխաներն ողնում էլին նրանց: Հայրերը նայում էլին յերեսխաներին և ուրախանում:

— Ապրեք, յերեխեք: Ես ձեր հացն ե: Հողից վասկի յենք հա-
վաքում: Մեծ ու փոքր իրար ոգնենք:

Մտտիկ կալերից գալիս եյին կոլեկտիվի աշխատանքներին նա-
յելու:

— Ոհան, — ասաց Պողոսն իր հարևանին, — տեսնո՞ւմ ես՝ կոլեկ-
տիվն ինչ մեծ ուժ ե:

— Հա, Պողոս ախպեր, — պատասխանեց Ոհանը. — մի ձեռքը
ծափ չի տա: Արի մենք ել մտնենք կ լեկտիվի մեջ:

— Մտնենք, մտնենք, — ձայնակցեցին մյուս գյուղացիները:
Կույակ Պապուշը նոթերը կիտած նայում եր: Շրթունքները
կրծելով նա մտածում եր. «Վա՛յն եկել ե ինձ տարել»:

ԲԱՌԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

աշխուժով — ժիր, չեռանգով | ձայնակցեցին — ձայն տվին

Վարչարչարչարի վարկային շն-
կիրություն

Պրեսում

Միւժ, վարչարչարչարի «Նմուսար-
ված» կոլեկտիվի անդամներու խնդրում
իւժ 500 ոտայի վարկ փող մի պրեսու-
յուս և յձկան գնիչու եւանար:

Պարտավորում իւժ վճարիչ մի
պարտիք նոր բիրթին, 6 ամիս եկար,
(Միւժ և սխարիսի)

«Նմուսարված» կոլեկտիվի
Վարչարչարչար նախագահ
Քարտուղար

1929 թ. հարսի 1-ին
Վարչարչարչար (Ազմար. գավառ):

25. ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՀՈՒՆԱՐԸ

Գյուղի վերևում, նոր շինած վարձակայանի առաջ գյուղացիք
եյին հավաքվել: Ընդարձակ կալում մի տեղ բամհարն եր աշխա-
տում: Մաքրած ցորենը սերմագտիչի սեջ են լցնում: Մեքենան
ներքեից սերմացուն ջոկ ե թափում, հավի կուտը ջոկ, ուտելու
ցորենն ել ջոկ:

Ազմկում ե բամհարը, փոշի չե հանում: Մեկը փոշու մեջ
անընդհատ թիակն ե բարձրացնում, հարդախառն ցորենը լցնում
մեքենայի մեջ:

Միքանի որ ե, վոր բացվել ե կայանը: Բոլոր գործիքները
նոր են ստացված, վարձակայանն ել նոր ե շինած: Գյուղի նեղլիկ,
ծուռուժուռ փողոցները վոչ մի հարմարություն չունեն շարքացան
կամ մի ուրիշ մեքենա գյուղամեջ փոխադրելու: Ստիպված կայանը
շինել են գյուղի գլխին, հանդ տանող ճանապարհի բերանին:

Հավաքվել են գյուղացիք, նայում են դարմացած: Վոմանք
կուսնում են, տակից նայում կամ վիզը յերկարացնում վերից նա-
յելու, տեսնելու, թե միջին ինչ կա, վոր այդպես լավ մաքրում ե:

— Մեր կնանոց կոները դինջացան, — ասում ե մեկը:

— Ա լսալիս, հավատալս չի գալիս, թե իմ ցորենն ա եսպես
խտակ...

— Մուքի ամի, աստված կարո՞ մեղավորին արդարից եսպես
ջոկի, — ձայնում ե մի շահել:

— Չե, ախպեր, աստված եդ հունարը չունի, — ասում ե Մուքի
ապերն ու գտած ցորենը շալակած դանդաղ քալելով հեռանում ե
գյուղի նեղլիկ փողոցներով:

ԲԱՌԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

վարձակայան - մեքենաները վարձով տալու տեղ

26. ՅՈՒՎԱՅԻ ԿՈՄՈՒՆԱՆ

Յուվացիները հասկացել են կոլեկտիվ աշխատանքի նշանակու-
թյունը: Նրանց կոմունան արդեն 100-ից ավելի անդամ ունի: Գյուղա-
ցիները և կոմունայի անդամները պարապում են այգեգործությամբ,
հողագործությամբ, տնայնագործությամբ և կավագործությամբ:

Կոմունայի անդամները միացրել են իրենց արտադրության
բոլոր միջոցները. պետությունն ել ե ոգնում այդ լավ գործին.
տաս հազար ուլբի յե բաց թողել բնակարաններ շինելու համար:
բացի այդ կոմունան ստացել ե մի շարք գյուղատնտեսական մե-
քենաներ՝ տրակտոր, հնձող, կալսող, սերմագտիչ և այլն:

Կոմունայում աշխատանքները տարվում են կարգ ու կանոնով՝ Առավոտից ամեն մեկն անցնում է իր գործին. վոմանք այգիներում են աշխատում, վոմանք՝ դաշտում, սի խուլ բը՝ բրուտանոցում. կանայք ու յերեխաներն ել անմասն չեն այդ աշխատանքներում:

Կոմունան շատ մեծ հետաքրքրությունն է առաջացրել շրջանի գյուղացիների մեջ. բոլորն ել իրենց աչքերով տեսնում են ընկերովի աշխատանքի ոգուտները, և որեցոր կոմունայի անդամներին թիվը շատանում է:

ԲՄ.ՌԵՐԻ ԲՄ.ՑՍՏՐՈՒԹՅՈՒՆ

տնայնագործություն—արհեստ, վորով գրադվում է ամբողջ ընտանիքը

արտադրություն միջոց—մեքենաներ, գործիքներ և այլն.

ԼԻԱԶՈՐԱԳԻՐ

«Նոր կյանք» կոմունայի վարչությունը լիազորում է կոմունայի անդամ ընկ. Արամ Գալստյանին ստանալ «Արարատ» տրեստից կոմունային արվելիք 500 (հինգ հարյուր) ուլերին:

Կնիք

«Նոր կյանք» կոմունայի վարչություն (ստորագրություն) (Տեղը, տարին, ամիսը, ամսաթիվը)

27. ԿՈՎԻ ԽՆԱՄԲԸ

1


Մեր գյուղացին իր կովը կերակրում է գլխավորապես խոտով, գարմանով, իսկ այլուր, թեփ, քուսպ քիչ է տալիս: Խոտը շատ անգամ գետին է թափվում. կովը կելի մի մասը կոխկրտում է: Կովերը կապում են մութ գոմերում, նեխված ողի մեջ:

Ուրիշ յերկրներում, որինակ՝ Հոլլանդիայում, Շվեյցարիայում կառուցում են ընդարձակ, լուսավոր գոմեր: Գոմերը պահում են շատ մաքուր: Կովերին կերակրում են վոչ թե միայն չոր խոտով ու դարմանով, այլ տալիս են նաև քուսպ, թեփ, ճակնդեղ... Կթելու ձևի և ժամանակի վրա շատ մեծ ուշադրություն են դարձնում: Դրա համար ել այնտեղի կովերը լավ են լինում, շատ կաթ տալիս, տերերը շատ ոգուտ են ստանում:

2

Վորպեսզի մեր կովերը մեզ շատ ոգուտ տան, մենք ել պետք է կովերին լավ խնամենք. որինակ՝ գոմերը պետք է լինեն լուսավոր:

գոմերի պատերը պետք է լինեն սվաղած. գոմի հատակը պետք է լինի հարթ.



Գոմը պետք է լինի վոչ ցուրտ, վոչ ել շատ տաք. պետք է կովերին կերակրել և կթել չափով և ժամանակին. յերբեք փչացած խոտ, դարման և այլն չպետք է տալ. բացի խոտից ու դարմանից կովերին պետք է տալ նաև ալյուր, թեփ, քուսպ, ճակնդեղ և այլն:

3

Այժմ տեսնենք, թե ինչպես պետք է կերակրել կովին: Ամենից առաջ պետք է պարզել կովի կենդանի քաշը: Դրա համար պետք է չափել կովի յերկարությունը՝ ուսից մինչև պոչի ծայրը: Հետո պետք է չափել շրջագիծը՝ թիակների վրայով: Այս թվերը պետք է բազմ սպասակել, և կստանանք կովի քաշը ֆունտերով: Որինակ՝ յեթե յերկարությունը 20 վերջուկ է, իսկ շրջագիծը 30 վերջուկ, կստանանք 600, այսինքն՝ 600 ֆունտ կամ 15 փուլ:

15 փթ սնոց կովին պետք է տալ որական 5 կերի միավոր (քաշի 3 փթին 1 միավոր), ապրելու համար: Այնուհետև յուրաքանչյուր 3 ֆ. կաթի համար 1 միավոր և 1 միավոր ել հորթուկի համար:

Ուտեմն յեթե հորթ ունեցող կովի կենդանի քաշն է 15 փուլ և որական 15 ֆունտ կաթ է տալիս, նրան տրվելու յե որական $5 + 5 + 1 = 11$ միավոր:

Կերի 1 միավորը	հավասար է.	իսկ 11 միավորը կանի
Ալյուր կամ թեփ	1 ֆ.	11 ֆ.
Խոտ	3 »	33 »
Հարդ (դարման)	5 »	55 »
Ճակնդեղ (տակ)	10 »	110 »
Կարտոֆիլ	7 »	77 »

Ուրձմն այսպիսի մի կովին պետք է տալ որական 11 ֆ. ալուր կամ 33 ֆ. խոտ, կամ 55 ֆ. հարդ, կամ 110 ֆ. տակ, կամ 77 ֆ. կարտոֆիլ: Իհարկե, լավ կլինի խոտն կեր տալ որինակ խոտ 12 ֆունտ (4 միավոր), հարդ 10 ֆ. (2 մ.), ալուր 3 ֆ. (3 մ.), տակ 20 ֆ. (2 մ.) կամ կարտոֆիլ 14 ֆ.:

Կաթն ավելանալու գեպքում կերն ել պետք է ավելացնել (3 ֆունտին 1 միավոր կեր):

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 1—միավոր, կազմիր սրտ ձևով
- 10
- 170
- 1000

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Հարյուրավոր, տասնավոր, հազարավոր:

- 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10

Այս թվերից կազմիր կարգը կամ դասավորութունը ցույց տվող բաներ:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Վեցերորդ, տասներորդ, առաջին, չորրորդ, ութերորդ, հինգերորդ, յերկրորդ, իներորդ, յերրորդ, տասներորդ:

23. ԼԵՎՈՆԻ ՏՐԵԽԸ

1

Ժանտախտը գեղից գեղ եր անցնում:

Շրջգործկոմն իրար եր խառնվել, ուզում ելին պարզել տարածվելու պատճառը:

Հանկարծ մի լուր բերին.

— Գիշերը գյուղացիներից միքանիսը հանել են իրենց ընկած տավարի կաշիները:

Ժանտախտը պետք է տարածվեր գյուղերը, ավերեր բոլորի տնտեսութունը:

Շրջգործկոմի նախագահը կարգադրեց՝ ժանտախտից ստակած անասունների կաշիները գյուղամեջ բերել:

— Ով վոր թագցնի, խիստ պատիժ կա,—հայտարարեց նա:

Կաշիները բերին, թափեցին գյուղի հրապարակում: Անասնաբույժն սկսեց բացատրել, թե ինչ վնասներ կարող են հասնել վա-

րակված կաշուց: Նախագահն ել խոսեց: Բոլոր կաշիները կտրատեցին, տարան փոսոււմ թաղեցին: Ամբողջ որը գյուղացիք խոսում էին. գրա մասին:

— Յեթե գործկոմի ասածները ճիշտ կատարելինը, ես որ եսքան անասուն չեր կոտորվի,—ասում էին գյուղացիք:

— Միշտ ել վնասը գալուց հետո յենք հասկանում գործկոմի ասածների ճշտարտութունը, բայց ելի խելքի չենք գալիս,—հայտարարեց գյուղխորհրդի նախագահը:

2

Բայց եղ ժամանակ ուրիշ մտքի յեր Լևոնը: Հանգստութուն չուներ, խիղճը տանջում եր: Հեռացավ հասարակութունից, գնաց քարատակ: Առաջը դրած գոմշի կաշին՝ միտք եր անում: Վերջապես վորոշեց ժանտախտից ընկած գոմշի կաշին ձևի, թագուն ծախի: Ձևեց, վերջացրեց:

Մյուս որն առավոտ, լուսաբացին, խուրջինը գցեց ուն ու դուրս յեկավ գյուղից: Գիշերը հասավ մոտիկ գյուղը. ծեծեց փեսի դուռը: Ներս մտավ, բարևեց: Իսկույն ձուտ մորթեցին, վտանները լվացին ու ամեն տեսակ պատիվ տվին նրան:

— Փեսա ջան, աղջկաս ու քեզ կարոտել էլի, յեկա տեսնեմ: Մի-մի ջուխտ տրեխացու յեմ ձեզ «փեշքեշ» բերել: Միքանի ջուխտ ել բերել եմ ծախելու:

Լևոնը միքանի որ մնաց իր փեսի տանը, քեֆ արեց, հիացավ իր բերած արեխներով ու վերադարձավ գյուղ:

Գուլըն ու փեսան շատ գոհ էին: Բայց յերկար չտևեց նրանց ուրախութունը: Միքանի որից տավարը հիվանդացավ: Դիմեցին շրջգործկոմ, Բժիշկն յեկավ. քննեց:

— Մեր գյուղում ախր չկար, վնասեղից յեկավ եղ անտեր ցավը,—հարցնում էին գյուղացիք զարմացած:

— Ուրիշ տեղի տավարը մեր հանգը չի յեկել,—ասում էին մյուսները:

Վերջը հանձնաժողով ընտրեցին, վոր քննի, թե վնասեղից առաջ յեկավ ժանտախտը:

Քննութունը ապացուցեց, վոր ժանտախտն սկսվել է են տներից, ովքեր Լևոնից արեխ էլին առել:

Լևոնն իր աչքածակութամբ միքանի հարյուր գյուղացու տուն քանդեց:

ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ վարակիչ հիվանդութիւններ են տարածվում անասունների մեջ:
2. Ի՞նչպէս պէտք է վարվել անասունների ժանտախտի ժամանակ:

29. ԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ

Մի գործարանում մինչև իրիկուն բանում ենք մեկտեղ յես ու նա, ըրանում ենք մեկտեղ, շարժվում որնիրուն վորպես նոր, աշխուժ մեքենա:

Անցնում ե որը խինդ ու ծիծաղով, որը արևոտ ու ժպտուն.
Մեքենայի մոտ ուրախ, ծիծաղկոտ նրա աչքերն են վառ ժպտում:

Սիրում եմ նրան վորպես սրտակից, այգպես ե սիրում նա յել ինձ.
մենք իրար ընկեր, մենք իրար մոտիկ— աշխատանքի մեծ բանակից:

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

որնիրուն—ամբողջ որը	աշխուժ—ժիր
սրտակից—մոտիկ, հարազատ	ժպտուն—ուրախ

ՀԱՐՑԵՐ

1. Ո՞ւմ ե սիրում բանվորը:
2. Ի՞նչու յե սիրում նրան:
3. Ի՞նչպէս են վերաբերվում իրար այս բանվորն ու բանվորուհին:

30. ԲԱՄԲԱԿԱԶՏԻՉ ԳՈՐԾԱՐԱՆԸ

Անցանք բակով և մտանք գործարանը:
Դա մի յերկար սրահ եր: Իրար կողքի շարված եյին մեքենաները:
— Այս մեքենան բամբակն ե գտում,—ասաց մեզ ուղեկցող բանվորը:—Փափուկ բամբակը շոկում ե հունդից:
Բանվորը բացեց մեքենայի խուփը: Ներս նայեցինք: Բամբակի սպիտակ քուլաները դարսվում եյին իրար վրա, անցնում խողովակ

ձով մի այլ բաժանմունք: Իսկ հունդը մի ուրիշ խողովակով թափվում եր ներքեի հարկը:

Գնացինք մամլելու բաժինը: Բամբակը դարսվում եր մի յերկաթե արկղի մեջ: Ապա մի ծանր մամուլ իջնում եր, սեղմում բամբակը, կապում ու մի կողմ նետում: Կապած հակերը դուրս եյին բերում և դարսում տախտակամածի վրա:

Յերկաթուղին հենց կողքով եր անցնում:

— Այստեղից հակերը դարսում ենք վագոններում և ուղարկում Անիսական, Մոսկվա —ասաց մեր ուղեկիցը,— իսկ հունդի մի մասը տալիս ենք գլուղացիներին իբրև սերմացու: Մյուս մասն ել հանձնում ենք «Ձեթ-Ոճառ» գործարանին:

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

բամբակագտիչ—բամբակ մաքրող,	մամլելի—ճմլելի	մամուլ—ճղճող
սրահ—գահլիճ, մեծ սենյակ	արկղ—սնդուկ	մեքենա
ուղեկցող—միասին գնացող	հակ—մեծ կապոց (թայ)	
տախտակամած—տախտակած տեղ		

31. ԴԱՐԲԻՆԸ

Ձեռներիս զույգ թաթման ունեմ,
կրծքիս կապած կաշվե գոգնոց.
մուրճը ձեռքիս հավատարիմ
և ընկերս՝ կարմիր հնոց:

Շիկացնում եմ տաք քուրայում
սև մետաղի մի մեծ զանգված.
և իմ մուրճի հարվածներից
արհեստանոցը լուսացավ:

Սալն ե զնգում ու զրնգում
մուրճի ուժեղ հարվածներից,
սև զանգվածն ե ձևափոխվում,
դառնում բլուսիկ, բահ ու բրին:

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

զանգված—գունտ, միակերպ	շիկացնել—կարժրացնել (կրակի վրա)
նյութի մի կույտ, կտոր	ձևափոխվել—նոր ձև ստանալ

ՊԱՏՄԵՑԵՐ

1. Ի՞նչ զգեստ ունի դարբինը:
2. Ի՞նչ գործիքներ կան դարբնոցում:
3. Ի՞նչ ե շինում դարբինը:

32. ՀԱՐՅՈՒՐ ՉԵՐՎՈՆԵՅ

Գյուղի ուսուցիչը, ընկեր Յուլիա մեծ յեռանդով փոխառութեան տոմսեր եր տարածում: Գնում եր գյուղամեջ խոտում, բացատրում, համոզում ու մեկին մի տոմս, մյուսին յերկուսը տալիս: Գյուղի ունեւորները խեթ-խեթ նայում էին նրան, բայց սիրա չէին անում ուզեն: Յուլիան աշխատում եր, վոր տոմսերը չքաղարներ ու միջակներ ձեռքն անցնեն:

— Այ Սմբատ, — ասաց Յուլիա մի բարակի, — մի տոմս եր դու վերցրու: Թե շահես — են ե, քո բախտից, թե չե, քո հնգանոցը ելի քեզ կմնա:

— Վարժապետ, իմ խելքը եղպես բաների չի հասնի. ինչ ասեմ, բաց աչքով վննց հանեմ, հինգ մանեթ տամ:

— Նա չի վերցնում, յես կվերցնեմ, — վրա բերեց փոխոգկոմի անդամ չքավոր Սուրենը: Պետութունը մեղնով ե պետութուն: Համ ել եդ 5 մանեթը կմնա մոտիս, մի սև որ պետք կգա:

— Այ քեզ անխելք, — մտքում ասաց Սմբատը:

Գարնան սկզբին Սուրենը բազաք գնաց սերմացու սասանալու: Յուլիա խորհուրդ տվեց նրան, վոր տեղեկանա փոխառութեան մասին: Սուրենը մի որով գնաց, չորս որ մնաց: Կինը շատ եր անհանգստանում. կարծում եր՝ մի փորձանքի յեկած կլինի: Մեկ ել կիրակի առավոտ յեկավ Սուրենը. ճանաչել չեր լինի. շորերը նոր, գլխարկը, կոշիկները. սալի վրա յել ամանեղեն, աթուռներ, կնոջ համար կարի մեքենա. յերեխաների համար խաղալիքներ:

Հակառակի պես պատանեց Սմբատը. շշմեց, աչքերին չեր հավատում:

— Ես ինչ ե, Սուրեն, խաղնա յես գտել, թե...

— Բա ինչ ելի կարծում. փոխառութունը վոր կա, խաղնա յես: Գու քո բախտի զլխին քար գցեցիր:

Սմբատը լեզուն կծեց. հարյուր չերվոնեցը վննց թողեց ձեռքից:

ԲԱՌԵՐՈՎ ԳՐԻՐ ՀԵՏԵՎՅԱԼ ԹՎԵՐԸ

- 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10
10, 20, 30, 40, 50, 60, 70, 80, 90, 100, 1000

ՈՐԻՆԱԿ՝

Մեկ, յերկու, հինգ, ութ, տաս...
Բասն, քառասուն, վաթսուն, հարյուր...

ԳՐԻՐ

Նաև հետևյալ թվերը
16, 29, 106, 239, 1929, 1905, 1917, 1920.

ՏԵՂԵԿԱՆՔ

- 1. մեկ, յերկու, յերեք, չորս, հինգ, վեց, յոթ, ութ, ինն.
2. Տաս, քսան, յերեսուն, քառասուն, հիսուն, վաթսուն, յոթանասուն, ութսուն, իննսուն.
3. Հարյուր, յերկու հարյուր, ութ հարյուր...
4. Հազար, հազար ինն հարյուր քսանինն:

33. ԼԵՆԻՆԻ ԱՆՎԱՆ ԶՐԱՆՑԲԸ

Գնում ենք տեսնելու «Լենինի» ջրանցքը: Ծիծաղով ու կատակով հասնում ենք ջրանցքի բերանը:

Խայտալով դուրս ե յելնում ջուրն իր հարազատ մոր գրկից և առաջ ե հոսում իր նոր հունով:

Ամբողջ յերեք կիլոմետր ջրանցքն անցնում ե մայր գետին գուգահեռ: Նրա առջև ցցված բարձունքն աշխատել ե խափանել նրա ընթացքը: Բայց աշխատավորի ձեռքը փորել ե նրա կող ու կուշտը և ճանապարհ բացել իր սիրելի ջրանցքի համար:

Ջրանցքն իջնում ե դեպի ցած և դուրս ե գալիս ազատ ողի մեջ: Նա հոսում ե 85 մետր խորութեան հունով և այդպես ամբողջ 6 1/2 կիլոմետր:

Հունն այստեղ շինված ե քար ու կրով:

Ջրանցքը դուրս ե գալիս Եջմիածին և աշխատավորութեանը նոր կյանք ե ավետում: Նա խոտտանում ե կենդանացնել նրանց այրված ու խանձված դաշտերը և վոռոգել 2500 հեկտար հող, Նա զարկ կտա բամբակի ու խաղողի մշակութեան:

ԱՐՏԱԳՐԻՐ

Այս գասից բարդ բառերը իրենց մասերով.

Որինակ՝

ջրանցք — ջուր, անցնել | Ջուգահեռ — գույգ, հեռու

Տեղեկանք

Բարդ կոչվում են այն բառերը, վորոնք կազմված են 2 կամ 3 բառից:

34. ԱՆԻՎԻ ՅԵՐԳԸ

Շոգիդ ու շունչս
իրար են ձուլվում. —
անիվ իմ, դարձիր:

Դեռ նոր կոշտացած
իմ բազուկները
քեզ հետ են կապված,—
անիվ իմ, դարձիր:

Կարծես թե կյանքում
յերկուսս եսպես
մեկտեղ ենք ծնվել,—
անիվ իմ, դարձիր:

Անսանձ ու անզուսպ
սեր կա մեր սրտում,
իրար ենք սիրում,—
անիվ իմ, դարձիր:

Շողիք ու շունչս
իրար են ձուլվում,—
անիվ իմ, դարձիր:

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

բազուկ—ձեռք, թև
շոգի—գոլորշի (բուլ)
Հ Ա Ր Յ Ե Ր

անսանձ, անզուսպ—առանց սան-
ձի (ուժեղ, կատաղի)

1. Ինչո՞ւ բազուկները կոշտացած են:
2. Ինչո՞ւ բազուկները կապված են մեքենայի հետ:
3. Ինչո՞ւ բանվորն ու մեքենան «կարծես» մեկտեղ են ծնվել:

ԲԱՑԱՏՐԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ՏՈՂԵՐԸ

1. Շողիք ու շունչս իրար են ձուլվում:
2. Անսանձ ու անզուսպ սեր կա մեր սրտում:
3. Դեռ նոր կոշտացած բազուկները:

35. ՊՂՆՁԱՎԱՆՔՈՒՄ

1

— Հասն, ոգնիր Տիգրանին: Յես, Շալիկոն ու Ահմադը միբիչ հանգստանանք, նորից կզանք աշխատելու:

Հսեցիր, ինչ եր պատմում քաղաքից յեկած ընկերը պղնձի մասին:

Նա ասում եր, վոր ելեկարահանութունը մեր յերկրում տարածելու համար շատ կարևոր ե պղնձի արտադրության բարձրացումը, իսկ արտադրութուն շատացնելը կախված ե մեզից, այստեղ աշխատող բանվորներից. յեթե մենք՝ բոլոր բանվորներս ձեռք-ձեռքի աված լավ չաշխատենք, մեր իշխանութունը կկործանվի:

— Հն, մենք կաշխատենք. յես հասկանում եմ, վոր բանվորների իշխանության ուժը աշխատանքի մեջ ե. ընկեր Կարոն այդ մասին շատ ե պատմել ինձ. շատ լավ տղա յե Կարոն:

2

Պղնձի գործարանը հին գործարան ե. պատերազմի տարիներին նա կանգ եր առել. ավերել ու թալանել ելին, բայց խորհրդա-

յին իշխանութունը նոր կյանք տվեց այդ գործարանին: Հավաքվեցին բանվորները, յեկան նորերը. մոռացվեց ազգային վոխն ու վեճը, վոր աշխատում եյին. տարածել բանվորների մեջ ազաներն ու իշխանները: Այժմ բոլորը մի ընտանիքի անդամների պես հարազատ են իրար ու ձեռք ձեռքի աված աշխատում են:

Լավ տղաներ են բանվորները. ամենչից սիրվածը Միխան ե, փորձված բանվոր ու հին բայշլեիկ:

Ազատ ժամերին բանվորները հավաքվում են Միխայի շուրջը. նա պատմում ե իր անցյալից, բանվորների պայքարներից. շատ ել խիստ լեզու ունի:

— Բանվորները,—ասում ե նա,—հարուստների ու ազաների գերեզմանափորներն են, խորհրդային յերկիրը սրանց գերեզմանն ե: Հոկտեմբերին մենք թաղեցինք մեր ազաներին. այժմ հերթը մյուսներինն ե:

Տաքարյուն Շալիկոն վոզևորվում եր Միխայի ասածներից. այդ վառվուռն կոմյերիտականը անկեղծորեն նվիրված եր բանվոր դասակարգի գործին: Նա չեր մոռանում, վոր դեռևս շատ յերկրներում բանվորները գերի յեն կապիտալին: Նա իր մտքերը չեր թաղնրվում Միխայից և հաճախ ասում եր.

— Ընկե՛ր Միխա, յե՛րբ պիտի լինի են որը, վոր ձեզ, հին ու փորձված ընկերների հետ, ոգնության հասնենք մեր զրախ ընկերներին՝ տապալելու բուրժուական իշխանութունը նրանց յերկրում. յե՛րբ պիտի լինի այն որը, վոր հեղափոխության դրոշը ծածանվի մյուս յերկրներում...

— Կգա, կգա այդ որը,—համոզված ձայնով ասում եր Միխոն ու խոր հավատ ներշնչում յերիտասարդ ընկերներին:

36. ՅԵՂԲԱՅՐՆԵՐ

Յեղբայրներ ենք մենք են գլխից —
յես՝ բանվոր, դու՝ գյուղացի,
մեր սերտ, ամուր միությունից
հին աշխարհը կսարսի:

Յես կոփում եմ յերկաթ, պողպատ,
տալիս քեզ խոփ, գերանդի,
դու մշակում այգի ու դաշտ,
տալիս հացը ջո հանդի:

Յեղբայրներ ենք մենք են գլխից —
յես՝ բանվոր, դու՝ գյուղացի,
մեր կուռ, ջլուտ բազուկներից
կապիտալը թնդ սարսի:

ԲԱՌԵՐԻ ԲՍՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

սերտ—ամուր
կոփել—շինել, ծեծել
սարսի—սարսափել, դողա

կուռ—ամուր, պինդ
ջլուտ—առողջ մկաններով, պինդ

Հ Ա Ր Յ Ե Ր

1. Ի՞նչպիսի գյուղացին «յեղբայր ե» բանվորին:
2. Ո՞վ է թշնամի գյուղացու և բանվորի միության:
3. Բանվորի և գյուղացու սիրաթյան նպատակն ի՞նչ է:

Կ Ա Ր Դ Ա:

Այս վոտանավորն աչնպես, իբր թե գյուղացին և խոտում:
Յեղբայրներ ենք մենք են գլխից—
դու բանվոր, յես գյուղացի...
Դու կոփում ես յերկաթ, պողպատ...

ԱՄՐԱՑՆԵՆՔ ԽՈՐՀՈՒՐԳՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

37. ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵՑ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ

Հոկտեմբերյան հեղափոխությունը վերջ տվեց եսերների, մեն-
շեկիների ու դաշնականների իշխանություն: Նախկին Ռուսաստանի
տեղ կազմակերպվեցին խորհրդային հանրապետություններ:

Նրանք փոխադարձ կապ ունեցին, միասին կռվում էին բուր-
ժուանների ու կուլակների դեմ ու նոր կյանք կառուցում:

1922 թ. դեկտ. 30-ին Մոսկվայում, խորհրդային բոլոր հան-
րապետությունների ներկայացուցիչների համագումարում վորոշվեց
կազմել Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միու-
թյուն:

Սրա մեջ սկզբում մտան Ռուսաստանի Խորհրդային Սոցիալիս-
տական Ֆեդերատիվ Հանրապետությունը (ՌԽՍՖՀ), Ուկրաինյան
(ՈւՍՍՀ), Բելոռուսիան (ԲԽՍՀ) և Սնդրկովկասյան Խորհրդային
Սոցիալիստական Ֆեդերատիվ Հանրապետությունը (Վրաստանը,
Հայաստանը և Ադրբեջանը), ավելի ուշ Թուրքմենստանը և Ուզ-
բեկստանը:

ԲԱՌԵՐԻ ԲՍՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Ֆեդերատիվ—դաշնակից
կառուցել—շինել

եսեր—սոցիալիստ-հեղափոխական



ԽՍՀՄ-ի Կենտգործկոմի
նախագահ՝ ԿԱԼԻՆԻՆ
Ծնվել է 1875 թ. չքավոր գյու-
ղացու ընտանիքում:
14 տ. հասակից բանվոր է
յեղել:



ԽՍՀՄ-ի Ժողկոմխորհի
նախագահ՝ ՌԻԿՈՎ
Ծնվել է 1881 թ. չքավոր գյու-
ղացու ընտանիքում:
Աշակերտ ժամանակից մասնակ-
ցել է հեղափոխական աշխա-
տանքներին:

38. ԱՄՐԱՅԻՐ, ՄԵ՛Ծ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Խորհրդային Միություն
գյուղացու և բանվորի,
ամրացիր ու տարածվիր
չորս կողմերը աշխարհի:
Ստրուկների մեծ պաշտպան
մեր Միությունն է հզոր,
վորին անթիվ տանջվածներ
ապավինել են այսօր:
Խորհուրդներն Միություն,
ուժ ու միտք տուր աշխարհին,
ամրացիր ու գորացիր,
դարձիր համաշխարհային:

ԲԱՌԵՐԻ ԲՍՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

աուրուկ—գերի
ապավինել—հույս դնել

համաշխարհային—ամբողջ աշխար-
հի

(Անդրկովկասի Սոցիալիստական Ֆեդերատիվ Սոսիալիստական
Հանրապետություն)

Անդրկովկասում շատ ազգեր կան:

Ցարական կառավարությունը նրանց ճնշում և լարում էր մեկը
մյուսի դեմ: Նրանք ինքնուրույն չէին: Անդրկովկասը ցարական
իշխանության զաղուլթն էր: Ցարի տապալումից հետո իշխանու-
թյունն անցավ դաշնակիցների, մենշևիկների ու մուսավաթականների
ձեռքը: Բայց աշխատավոր ժողովուրդը դարձյալ ճնշված դրություն
մեջ մնաց:

Բայցևեկյան կուսակցությունը մեծ պայքար է մղել ազգերի
ինքնորոշման գործում: Այդ նպատակն իրագործեց Հոկտեմբերյան
հեղափոխությունը: 1918 թ. խորհուրդների համառուսական համա-
գումարին բոլոր ազգությունների աշխատավորներն ինքնորոշման
իրավունք ստացան: Նրանք կազմեցին իրենց ինքնուրույն հանրա-
պետությունները:

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

զաղուլթ—մեծ պետության հպատակ դրսի յերկիր
մուսավաթական—ազգայնական կուսակցության անդամ (Ազրբեջանում)

40. ԽՈՐՀՐԳԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1920 թ. նոյեմբերի 29-ից առաջ Հայաստանում իշխում էին
դաշնակիցները:

Դաշնակիցների ժամանակ Լոռում և Ղազախում աշխատավորնե-
րը փորձել են խորհրդային կարգեր մտցնել բայց դաշնակիցները
ճնշել են այդ փորձը: Որինակ՝ դեռ 1919 թ. սկզբին Լոռում կազ-
մվեց դուրազաբանական պատգամավորական խորհուրդ, խորհրդային
իշխանության լողուններով:

1919 թ. վերջերին և 20 թ. սկզբներին, յերբ Լոռին չեզոք
դուսի յեր, աջանեղ բայցևեկիների զեկավարութլաժը կազմակերպ-
վեց ինքնավարութլուն նույն սկզբունքներով:

1920 թ. մայիսյան դեպքերից հետո Ղազախում կազմվեց ռազ-
մա-հեղափոխական կոմիտե, վորը փոփոխակի հաշոդութլուններով
տեեց մինչև Հայաստանի խորհրդայնացումը:

Դաշնակիցների իշխանութլան որոք Հայաստանում միշտ ազգա-
միջյան կոիքներ էին լինում: Գյուղացիների անտեսութլունը բայ-
քայվել էր: Հայաստանում աշխատավորութլունը կարված էր Սոր-
հրդային Ռուսաստանից: Յեվ ահա 1920 թ. մայիսին Հայաստանի
բանվորներն ու դուրազաբանները կրկին ապստամբեցին դաշնակից-
ների դեմ: Բայց լավ չէին կազմակերպվել: Այդ պատճառով դաշնակի-
ցները ճնշեցին աշխատավորների ապստամբութլունը:

Նույն տարվա նոյեմբերին Հայաստանի աշխատավորները նորից
ապստամբեցին: Այս անգամ նրանց ոգնութլան հասավ Կարմիր բա-
նակը: Դաշնակիցները փախան. Հայաստանում հայտարարվեց խոր-
հրդային իշխանութլուն:

Այն որից մինչև այժմ Հայաստանի բանվորներն ու դուրազ-
ացիները կառավարում են իրենց յերկիրը:



Ս. Կասյան
Հայաստանի առաջին Հեղկոմի
նախագահ. այժմ—Հայաստանի
կենտրոնականի նախագահ. ծնվել է
1876 թ.



Մ. Տեր-Փարբեղյան
Հայաստանի առաջին Հեղկոմի
անդամ. այժմ—Հայաստանի Ժող-
կամխորհի նախագահ. ծնվել է
1886 թ.

Հայաստանի Սորհրդային Հանրապետութլունը մտնում է Ան-
դրկովկասյան Ֆեդերացիայի մեջ վորպես դաշնակից յերկիր:

Անդրկովկասյան Սորհրդային Հանրապետութլունը մտնում է
Սորհրդային հանրապետութլունների Միութլան մեջ վորպես դաշ-
նակից պետութլուն:

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

ազգամիջյան—տարբեր ազգերի մեջ
ապստամբել—վորքի յերկիր, կովի դուրս գալ ճնշողների դեմ

— Միրուն ազլիկ, ո՛ւմ ես սիրում աշխարհում,
սավետական ես մեր սիրուն աշխարհում:

— Քաղքից չեկած են տղին եմ յես սիրում,
կեպի դրած են տղին եմ յես սիրում,
աչքերը շող են տղին եմ յես սիրում,
մաշին քշող են տղին եմ յես սիրում:

— Ընչի՛ համար դու չես սիրում են տղին,
բոլը սիրուն, տեսքը սիրուն են տղին,
հոնքը կիտած, բեղը սրած են տղին,
գլխին սև-սև փափախ դրած են տղին,
մաուզերը կողքից կախած են տղին,
մեր հանդերից հեռու փախած են տղին:

— Ընչի՛ սիրեմ բեղերը ցից են տղին,
հո՛ղը դնեմ աշխարհի ցեց են տղին,
թալան տվող լիրբ ու հարուստ են տղին,
մաուզերին ձեռքը դրած են տղին,
ըռանչաբարի շիվան ու լաց են տղին:

Յես են տղի յերգն եմ սիրում աշխարհում,
սաշին քշող ձեռքն եմ սիրում աշխարհում,
յես են տղի խելքն եմ սիրում աշխարհում,
սավետական ես մեր սիրուն աշխարհում:

Ուսուց գյուղի Լյւիս բգիգին
բարբաակ Ալթ Բրեդյանից
Պիսեում

Խնդրում իմ ընտանիք ինչ կույժի
բխարիտարյան շարքերը:

Արամ կյում իմ իմ կարգարիտար.
Ա. Բրեդյան

Մեր գյուղի դպրոցի շենքը հնացել էր: Կոմյերիտաժուժյան
բլիժի բարտուղար Վաղոն կանչեց իր ընկերներին խորհրդակցու-
թյան: Նրանք վորոշեցին դպրոցը նորոգել:

Վաղոն հայտարարեց գյուղացիներին.

— Բլիժի կողմից խոսք եմ տալիս՝ մեր ուժերով ձրի նորոգել
դպրոցը, սիայն հարկավոր են սալեր, վոր քար ու գերան կրենմ,
Բո՛րոն ուրախացան և խոստացան սալ տալ: Քար բեխնը:
գերան կրեցին և սկսեցին տաշել, տաշաշել: Բայց շուտով զգացին,
վոր միջանի աշխատանքներ չեն կատարել:

Կանչեցին խառատ Մովսեսին, վորը սիրով հանձն առավ ոգնել
նրանց:

Յերկու շաբաթից հետո դպրոցը նորոգեցին պրծան:

Ուսուցիչը գյուղացիներին ժողովի կանչեց ու գեկուցեց կոմ-
յերիտականների արածի մասին:

Միաձայն վորոշեցին շնորհակալություն հայտնել կոմյերիտա-
կաններին:

Նորջամուսացրոսյուն

Թույլն գյուղի կարասրակակամ ժողովի

1929 թ. Մարտի 11-ին

Ներկա իմ 61 ժողովակամ

Նուսրուգուտ վարդամ Նույամ

Սրակարգ դպրոցի վիրամորոգումի.

Լուիլն:

Ընկիր Գրիգորի վիկույումի դպրո-
ցը նորոգիլու Մարտի.

Վորոշիլի՛ն Ընտրակակարոսյուն կայր:

Նիլ կախիլար բգիգին կարգարչակի
գծով դպրոցը նորոգիլու առթիլ:

հարց հարուցել Գյուղխորհրդի և
ուսգ դպրոցի բակը զանկապարկու
հարին:

Ժողովի նախագահ
Քարտուղար

43. ՆԱՄԱԿ ՀԱՆԳՍՏԻ ՏՆԻՑ

Ընկեր Գեփորգ,

Տան որ ե, վոր այտեղ եմ: Ինձ լավ եմ զգում: Քաշս ավելա-
ցել ե 2 կիլո: Լավ ենք սնվում. առավոտ թեյի հետ մեղր ու կա-
րագ կամ պանիր ու ձու յենք ուտում, նախաճաշին՝ կաթ կամ
կակաո, հետը ձու, պանիր և այլն: Ճաշը յերկու կամ յերեք տե-
սակ (յերբորդը՝ քաղցր): Ընթրիքին՝ մածուն կամ մի ուրիշ թեթե-
կերակուր:

Ճաշից հետո հանգստի ժամ ե, հետո յել զրոսանքի յենք զնում-
ինչ գեղեցիկ են անտառը, հովիտները, դաշտերը:

Ընթրիքից հետո ժամանց ե լինում—զրույց, խաղ, յերգ: Այս-
տեղ բոլորն ել լավ ընկերներ են, մեզ պես աշխատավորներ՝ գյու-
ղացի կամ բանվոր. ծառայողներ ել կան—մեծ մասը տեխնիկական
աշխատավոր: Ձգում ես, վոր հարազատ միջավայրում ես զտնվում:

Ունենք պատի թերթ. հետաքրքիր ե մեր այբոմը. ամեն մի
այցելու զրում ե իր կարծիքն ու ցանկությունները: Ինչպես գոհ
են բոլորն ել խորհրդային իշխանությունից:

Հուսիկն արդեն կազգուրվել ե, գիրացել:

Բարևներ բոլորիդ
Քո՝ Վաչիկ:

1929 թ. 18 ոգոստոսի
Դիլիջան-սանատորիա

Ձուշոր տառերով արտագրիր այս լուղուեղները
և փակցրու պատերին.

Ձիտֆրո, յիրադ և հարմիր միշը
հարաք պանիր.

Սեփարակիդիք շուք շուք փոխիր
քրակարամուտե միշը հարաք ող
և արե բող լիւրի.

Չուրը, ողը և արեք մի բարիկա
նիրն ին:

Ուր արե յի հրմում բժիշկ կնրմի:

Կոպուցի շրջանի ժող. դարարան
բարրակ նիւանայիս Կոպուցի
բողով

1928 թ. գարնանից յիս վարչելամ իմ
Քանաֆիտի սցգիրիք վարու թույան.
յանի մուր անուական 15 ուսրչի ոտի
կով. միկ քարի ծանամակով. ումիւմ գը
յուվոր պայնան Կոպուցիստ միտրյան
կողմից հարարարվամ: Նույն թվի եով.

զիւրիքը անսխալ ուղիով չի արտայտի, և
 նախած մի քանի անգամ պատկանելի իմ:
 հողամասերու միտքոյան պատկանելի թա-
 վանքներ չի կարգարտում:
 Ներկայացնում իմ պայտանակարգը:

Նորանայիս կողման
 1929 թ. հունվարի 16-ին
 Քանապիտ.

Լ Ե Ն Ի Ն Ն Ո Ւ Կ Ո Մ Կ Ո Ւ Ս Ը

44. ՎԼԱԴԻՄԻՐ ԻԼՅԻՉ ԼԵՆԻՆ

1

Վլադիմիր Իլիչ Ուլյանով-Լենինը ծնվել է 1870 թ. Միմրիբուկ քաղաքում: Նրա հայրը ժողովրդական դպրոցների տեսուչ էր:

Լենինը միջնակարգ ուսումն ավարտեց 17 տարեկան հասնակում: Այդ ժամանակ նրա մեծ յեղբորը՝ Ալեքսանդրին մահապատժի լենթարկեցին Ալեքսանդր III-ի դեմ մահափորձ կատարելու համար: Այդ դեպքը խիստ ազդեց լերիտասարդ Լենինի վրա: Նա մտածում էր՝ վոր մի թագավորի սպանելով բան դուրս չի գա, վոր պետք է ազատել ժողովրդին թե՛ թագավորից և թե՛ ամբողջ ճնշող դասակարգից: Լենինը թեև համալսարան մտավ, բայց այնտեղից շուտով արտաքսվեց ուսանողական շարժման մասնակցելու համար: Միայն 4 տարուց հետո նրան հաջողվեց համալսարանում ջննություն տալու:

2

1893 թվին Լենինը գնաց Պետերբուրգ (այժմ Լենինգրադ) և այնտեղ սկսեց աշխատել բանվորական գործի համար: Նա կազմա-

կերպեց բանվորների գաղտնի միություններ և նրանց սովորեցնում էր Մարքսի ուսմունքը: Բայց շուտով Լենինին իր ընկերների հետ ձերբակալեցին և մի տարուց ավելի բանտում պահելուց հետո՝ 1897 թ. արտրեցին Միբիր: Յրեք տարի Միբիրում մնալուց հետո Լենինը գնաց արտասահման: Այստեղ նա սկսեց կազմակերպել բալղհիկների կուսակցությունը: 1905 թվին սկսվեց ուսական առաջին հեղափոխությունը, բայց դիմվորների և գյուղացիների անգիտակից լինելու պատճառով չհաջողվեց:

Լենինն անընդհատ ղեկավարում էր բանվորական շարժումները: 1917 թվին կատարվեց Փետրվարյան հեղափոխությունը: Թագավորը տապալվեց, բայց իշխանությունը մնաց բուրժուանների և կապիտալիստների ձեռքում:

3

Լենինն այդ ժամանակ վերադարձավ արտասահմանից, անցավ բանվորական շարժման գլուխը և ղեկավարեց Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունը: Իշխանությունն անցավ խորհուրդների ձեռքը: Բանվորները, գյուղացիներն ու կարմիր բանակը միացյալ ուժերով ձեռք բերին իրենց ազատությունը Լենինի առաջնորդությամբ: Բայց յերկարատև աշխատանքը և կրած տանջանքները կարճեցին մեծ մարդու կյանքը: 1924 թվի հունվարի 21-ին Լենինն այլևս չկար:

ԲԱՌԵՐԻ ԲՍՑՍՏՐՈՒԹՅՈՒՆ

արտաքսել—վանդել, դուրս անել | ձերբակալվել— բռնվել

45. ԻՆՉՊԵՍ ՉԱՆԴԻՊԵՑԻ ԼԵՆԻՆԻՆ

(Գյուղացու պատմածը)

Մեկ անգամ գարնանը յերկաթուղով գնում եյի Տուլայի գալառը՝ դաշտային աշխատանքների համար վարձվելու: Տեսնեմ՝ մի սեղանի շուրջը յերկու հոգի նստել են—մեկի հագին կաշվե կուրտիկ, մյուսին՝ վերարկու: Մեկի դեմքը ծանոթ էր: Մոտեցա, հարցընում եմ—կարելի՞ չե այստեղ թեյ խմել:

— Նստի՛ր, ընկեր, նստի՛ր,—պատասխանեց ծանոթ դեմքով մարդը: Նույնիսկ տեղից թիչ շարժվեց, վոր հարմար լինի ինձ համար:

Հետո զրույց սկսեց ինձ հետ: Մեր գործերով շատ էր հետաքրքրվում:

Յերշիկով ինձ հյուրասիրեց: Իմ թելամանից ել իրեն համար թեյ ածեց: Բոլորովին մտերմացանք: Կարծես իմ հոգուց եր խոսում: Վերջը հարցնում եմ.

— Միրելիս, ինչ ե քո անունը:

— Վլադիմիր Իլիչ, — պատասխանում ե: Դե, ցտեսություն: Հնչեց զանգը: Ժամանակ ե գնացքը մտնելու:

Ու ժպտալով հեռացավ: Իսկ կաշվե կուրտիկով մարդը կանգ առավ ու հարցրեց ինձ.

— Միթե չգիտեիր, ընկեր, թե ում հետ ես խոսում: Չե վոր Լենինն ե նա:

Եստեղ միայն յես գլխի ընկա, թե ինչու նրա դեմքը ծանոթ յերևաց ինձ: Չգիտեմ ինչը հուզեց ինձ, բայց արցունքներ կախվեցին աչքերիցս:

Վոր մեռնեմ ել, այդ բոսկենքը մոռանալու չեմ:

ԲԱՌԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

յերշիկ — կալբաս

| կուրտիկ — կիսամուշտակ,
կարճ քուրք

46. ՀԱՄ ԿԿ. ԿՈՄԻՆՏԵՐՆԻ ԱՌԱՋԱՎՈՐ ԶՈՎԱՏ

Աշխատավորության ուժը միության մեջն ե:

Բոլոր յերկրների բանվորների առաջավոր խավերը վաղուց հասկացել եյին այդ և ձգտում եյին միջազգային միության:



Այդ միությունը ներկայումս հանգիստնում ե Կոմունիստական Ինտերնացիոնալը:

III (Կոմունիստական) Ինտերնացիոնալը բոլոր յերկրների կոմունիստական կուսակցություններին միությունն ե: Նա ձևակերպվել ե 1919 թվին:

Կոմունիստական Ինտերնացիոնալի ամենաուժեղ ու փորձառու կուսակցությունը Համամիութենական Կոմունիստական (բալլշիիկների) Կուսակցությունն ե՝ Համ Կ (բ) Կ:

Կոմիներնի խնդիրն ե իր շուրջը համախմբել ամբողջ աշխարհի պրոլետարիատին ու ձնշված ժողովուրդներին և ղեկավարել

նրանց պայքարը կապիտալիստական հասարակարգի տապալման գործում: Նա ձգտում ե վոչնչացնել կապիտալիստական պետությունը, կապիտալիստների ղեկատուության փոխարինել այն պրոլետարիատի ղեկատուությամբ, վոր պիտի վոչնչացնի ամեն մի անհավասարություն ու շահագործում: Կոմիներնը համաշխարհային պրոլետարիատի գլխավոր շտաբն ե, վորը ղեկավարում ե պրոլետարիատի պայքարը կապիտալիստների դեմ:

Այդ բոլոր կարևորագույն խնդիրները Կոմիներնը կարող ե նշել ու իրագործել միայն շնորհիվ իր մեջ ղեկավար աշխատանք տանող Համամիութենական Կոմկուսակցության, վորը ստեղծվել ու զարգացել ե Լենինի ղեկավարութեամբ:

Համ Կ (բ) Կ յերկարամյա պայքարի փորձառությունը դարձրնում ե նրան Կոմունիստական Ինտերնացիոնալի ղեկավարն ու նրա առաջավոր ջոկատը:

Համ Կ (բ) Կ այդ փորձառությունը ձեռք ե բերել ցարի, բուրժուազիայի ու համաձայնողական — մենշևիկների դեմ մղած առանցակ տարիների պայքարում և մասսաներին իր շուրջը համախմբման գործում: Նա այդ պայքարի ընթացքում կարողացել ե զտել իր շարքերից պրոլետարիատի դավաճաններին ու դառնալ բանվոր դասակարգի հարազատ կուսակցությունը:

Ճիշտ զնելով բանվոր-գյուղացիական գաղիքի խնդիրը և ղեկավարելով բանվոր դասակարգի ու աշխատավոր գյուղացիության պայքարը 1905 և 1917 թվի (Փետրվարյան) հեղափոխություններին, Համ Կ (բ) Կ մեծ փորձ ձեռք բերեց բուրժուազիայի դեմ կռվելու գործում: Ունենալով այդ փորձը, նա կարողացավ ձիշտ ղեկավարել Հոկտեմբերյան հեղափոխությունը, վորը վերջացավ բանվորների ու գյուղացիների հաղթութեամբ: Այդ հաղթությունները նա տարել ե շնորհիվ իր միասնության, սովետականության և ամուր կարգապահության:

Բացի այդ Համ Կ (բ) Կ ղեկավարում ե ԽՍՀՄ սոցիալիստական շինարարությունը, վորից որինակ են վերցնելու մյուս յերկրների կոմկուսակցություններն ու բանվոր դասակարգը:

ԲԱՌԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

խավ — շերտ

| տապալել — գլորել

47. ԻԼՅԻՉԸ ՄԵՋ ՈԳՆԵՑ

(Գյուղացու պատմածը)

Յես մոտեցա Կրեմլի գոճերին, վորտեղ անցատուս ելին տալիս: Ինձ սպասեցրին, անցատուսն ստացա և մտա ժողկոմխորհի ընդունարանը: Դեռ չեյի ջոկջկել իմ թղթերը, վոր ինձ հրավիրեցին վերև, Իլիչի մոտ:

Ներս մտա: Իլիչն ինքը մոտեցավ, ձեռքս սեղմեց ու խնդրեց նստել:

— Դե, սաս, ի՞նչ նորու թյուն կա գյուղում: Ի՞նչպես ե աշխատում ելեկարողայանը,—հարցրեց Իլիչն ինձ:

Յես ասացի, վոր ուզում ենք մեծ կայարան շինել, և մեզ միանում են յերեք գյուղ:

Իլիչը շատ ուրախացավ այս հաջողության համար և ասաց.

— Յես ձեզ կողմնեմ, ընկերներ, շինեցե՛ք այդ մեծ ելեկարողայանը:

Մի տեսնելիք՝ ինչպես ուրախացան մեր գյուղացիք, յերբ չես փնչացող բեռնատարով գյուղ մտա՝ հետս մոտորն ու զինամոն:

Այս բոլորը չես ստացա Իլիչի շնորհիվ:

Գյուղում սիլ չգիտեր Իլիչի մասին. կարծես ամենքի հարազատն ու խնամակալն եր:

Այժմ չկա Իլիչը, բայց նա ապրում ե մեր սրտում: Յե՛վ նրա հիշատակին մենք ժողովրդական տուն ենք կառուցում մեր գյուղում:

ԲԱՌԵՐԻ ԲԱՑՄԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Կրեմլ—Մոսկվայի կենտրոնը		բեռնատար—բեռ կրող ավտո
միջնաբերդ (հին ժամանակ)		մոտոր—շարժիչ մեքենա
ժողկոմխորհ—ժողովրդական		զինամո—ուժամեքենա
Կոմիսարներ խորհուրդ		

48. ԼԵՆԻՆԻ ՄԱՅԸ

1924 թ. հունվարի վերջին Մոսկվայում պետք ե կայանար խորհուրդների համառուսական XI համագումարը: Հունվարի 22-ին առավոտյան համագումարի նախագահ ընկ. Կալինինը ժողովը բանալով ասաց.

«Ընկերներ, խնդրում եմ վորքի կանգնեք: Յես ձեզ պետք ե մի ծանր լուր հայտնեմ: Վլադիմիր Իլիչի առողջությունը վերջին ժամանակներս բավականին դեպի լաջն եր գնում: Բայց յերեկ կաթված ստացավ Վլադիմիր Իլիչը և մեռավ:

«Ընկերներ, այժմ ասելու բան չունեմ... Յես կարծում եմ՝ ամենապիստավոր և հիմնական խնդիրը, վոր դրված ե մեր առաջ, այն ե,—պահպանել այն նվաճումները, վորոնց զլխավոր ստեղծողը Վլադիմիր Իլիչն եր»:

*
*
*

Մի ընդհանուր հառաչ դուրս թռավ... Ամեն ինչ քարացավ... Պայծառ դահլիճը կարծես թե մթնեց... Զսպված հեկեկանքը հետըհետե ավելի դուրս պոռթկաց... Այնուհետև ամեն ինչ կարծես յերազ եր...

Հիշում եմ ընկ. Կալինինի առաջարկությունը— Իլիչի մահվան որը սգի որ համարել, Նախագահության հայտարարությունը, թե Իլիչի մարմինը այստեղ կհասնի վաղը... մահվան քալերգ:

Ընդհանուր խուլ հեկեկանք... Ով վոր չի կարող մարդկանց մոտ լաց լինել, վազում, թագնվում ե մի կողմնակի տեղ...

Ցրվում են... վոչվոք վոչինչ չի խոսում, վոչվոք վոչինչ չի հարցնում...

ԲԱՌԵՐԻ ԲԱՑՄԱՏՐՈՒԹՅՈՒՆ

կաթված—անդամալույծ լինել		նվաճում—ձեռք բերած հողթու-
(պարալիչ)		թյուն, առաջադիմություն
պոռթկալ—դուրս պրծնել		

49. ԼԵՆԻՆՅԱՆ ԶՈՐԱԿՈՉԸ

Ժամը 5-ին խորհրդային անտեսության դահլիճում հավաքվեցին բանվորներն ու բատրակները. տեղավորվեցին՝ վորը նստարաններին, վորը պատուհանի գոգը, վորը հենց այնպես պատի տակ պղպեց:

Յերկու բանվոր վիճում ելին.

— Մենք ել մե՛ր զինն ունենք: Կուսակցությունը մաշինի նըման մի բան ե. Լենինը մոտորն եր, մենք ել անիվները պատացնող փոկերն ենք: Մեկը մյուսին պետք ե. շատ ել ձերացել ենք, ի՞նչ արած...:

— Եյ, դուք, միրուքավոր կոմսոմոլխատներ, ի՞նչ եք գոռոռում: Մոտեցե՛ք, սկսում ենք...

Սեղանին դարսած ելին դիմումները: Նախագահը բաց արեց նիստը: Ահա մոտեցավ մի բանվոր, զլխարկը հանեց, սկսեց ձեռքերի մեջ տրորել ու խոսեց.

— Իմ կյանքն եսպես ե, ընկերներ, իստակ պրոլետար եմ.

մանկությունից աշխատել եմ գործարաններում, չորս տարի չեմ
խառնու...

- Մի հարց ընկերոջը. հարմիր բանակում յեղե՞լ ե:
- Ա. ո. Ռոստոփ տակ, Բագվում, Դիլիջանում...
- Մի խոսքով՝ մերն ե: Բվեարկում եմ: Ո՞վ ե դեմ: Վոչոք:
- Մոտենում ե մի ուրիշը. նախկին բատրակ:
- Ինձ համար ամոթ ե Լենինի կուսակցությունից դուրս մնալ:
- Յես ինչ ասեմ: Փոկից ու կինբաժնից հարցրեք իմ մա-
- սին, — ասում ե մի բանվորուհի շփոթված:
- Ընդունե՛լ, ընդունե՛լ լավ աշխատող ե Սաթոն, աչքաբաց, —
- գոռում են այս ու այն կողմից:

Մոտենում են յերկու ծերուկները:

- Մենք ջահել չենք, բայց նոր ենք չարն ու բարին հասկա-
- ցել: Մեր առաջնորդը մեռավ, սեր պաշտպանն ե կուսակցությունը,
- վորին ուզում եք անգամ լինել:
- Հը՛, ի՞նչ կասեք, ընկերներ, — հարցնում ե նախագահը:
- Լավ ընկերներ են, փորձված ու ազնիվ...

Ծափերն ընդհատում են խոսողներին:

Ահա և ակումբի վարիչը՝ պատանի Հրայրը:

— Ե՛գ մեկը չեղավ. քո տեղը կոմսոմոլն ե, ենտեղից սկսիր,

սիրելի՛ Հրաչիկ ..

Մեկ-մեկ քննեցին, հարցուփորձ արին. ուզում ելին պար-

զել՝ ո՛ւմ են ընդունում Լենինի կուսակցության մեջ:

Խորհրդային անասությունը 11 անգամ ավելց Լենինյան գո-

րակոչին:

Բանվոր ու քրավոր գյուղացի՛, մտի՛ր Լենինի
կուսակցության շարքերը:

Հիմնական հարցն այն ե, վոր բանվորությունը կարողանա
իր կողմը գրավել հնացած ու խղճալի սնեստության սեր գյուղա-

ցիական մասսան:

Լ. ԵՅԻԳ

1. ԿՈՄՍՈՄՈՐԸ ԲԱՅ ԱՐԵՑ ԻՄ ԱԶՔԵՐԸ

Յես զրկվել եմ ծնողներիցս դեռ 1915 թ. և սարսափելի ու-

րեր անցկացրել: Սոված, ծարավ թափառում եյի սրա ու նրա դու-

ւր, և հետո ընկա վորբանոց: 1920 թվին Գանձակից տեղափոխվե-

ցի Հայաստան: Այս 8 9 տարվա ընթացքում մասնակցել եմ կոմ-

սոմոլի աշխատանքներին և զգացել, թե ի՞նչպիսի մեծ ոգնություն

ե ցույց տվել կոմսոմոլը կուսակցությանը, չերկրի շինարարությա-

նը: Բանի՛ ինձ նման աղջիկների աչքերը բաց ե արել և դժոխա-

լին կյանքից դուրս գալու ճամպեն ե ցույց տվել:

Այժմ յես աշխատում եմ Արարատ գործարանում:

Մեր պետությունը ամեն կերպ աշխատում ե մեզ համար

տանելի պայմաններ ստեղծել. հարավորություն ե տվել սովորե-

լու: Առաջ յես ժողովի յերես չեյի տեսնում, այժմ յես ազատ-հա-

մարձակ հաճախում եմ ժողովներ, ազատ խոսում, գնում բաղխմ-

բակ: Խորհրդային իշխանությունը մեզ հանել ե նկուղներից և

հատկացրել ե մաքուր, լուսավոր բնակարան:

Վարդանուշ Պետրոսյան

2. ԱՆԳՐԱԳԵՏ ԲԱՏՐԱԿ ԵՅԻ, ԱՅԺՄ — ԳԻՏԱԿԻՑ ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ

Կենսագրությունս կարճ ե: Ծնվել եմ բատրակի ընտանիքում,

հայրս խեղճ ու կրակ մի գյուղացի յե յեղել:

Ամբողջ կյանքը անց ե կացրել սրա-նրա դուսը նորարարություն

անելով և մեռել ե կյանքի մեջ լավ որ շտեմելով:

Իհարկե յես ել հորս նման խեղճ ու կրակ բատրակ կմնալի,

յեթե չգար խորհրդային իշխանությունը և մեզ նմաններին չփը-

կեր ազաների ճանկերից:

Կոմսոմոլը ինձ հասկացրեց, թե վորն ե իմ խերն ու շառը,

ո՛ւմ դեմ պետք ե յես կռվեմ, և ի՞նչ անեմ, վոր ինձ նմաններն

այլևս անտեր չմնան:

Յես ընդունվեցի կոմսոմոլի մեջ. Խաղելինս ինձ որ ու ցերեկ

աշխատեցնում եր, ծեծում: Կոմսոմոլը միջամտեց, պայման կապեց

խաղելինիս հետ, ինձ հասկացրեց, վոր պետք ե բատրակների մի-

ության մեջ ընդունվել:

Այժմ խաղելինս ինձ 8 ժամից ավելի աշխատեցնելու իրավունք

չունի, աշխատավարձս ժամանակին ե վճարում, աշխատանքից հե-

տո հաճախում եմ լիկկայան՝ սովորում:

Ս. Մարտիրոսյան

Ապի ջան, յես ինձ վրա զարմացել եմ. ժողովում օրհայես եմ
 առանց կապվելու ճառ ասում, վոր չես ասի, թե ես են Սիմոնե-
 Մի ուրախութիւնն ել, ապի ջան,—կուսակցութեան մեջ եմ
 մտել, Հիմա ավելի յեմ կարգում, վոր իմանամ, թե աշխարհում ինչ
 է անցնում-գառնում:

Մի ուրախութիւնն ել այն է, վոր իմացա՝ դու կողեկտի՛ւ
 տնտեսութեան մեջ ես: Ընկերներիս առաջ պարծենում եմ, թե ա-
 պիս ել սոցիալիզմի համար ե աշխատում:

Գարնանը արձակուրդ կգամ: Բարևներ ազուն, յերեխաներին:
 Քո վորդի՛ կարմիր-բանակային Սիմոն

Հ Ա Ս Ց Ե Ն Ե Ր

1. Հասարակ նամակի

<p>Կարգաբաշխարար</p> <p>..... փողոց N.....</p> <p>Լևոն Պարթիզյանին</p> <p>Ծ. Պարթիզյանից, Յիբևան, Պաթֆի փ. 16</p>	<p>Տարիք</p>
---	--------------

2. Գատվերած նամակի.

<p>Յիբևան</p> <p>Ներույցան փող. N 87</p> <p>N 1 Թանկապարտիչի վարիչին</p> <p>Վարդաբաշխար (Վասի. Լուսու գաւ.)</p> <p>Խաւար Արապյանից</p>	<p>Տարիք</p>
--	--------------

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Բ

Մարկան կարելի չէ կպցնել ծրարի մյուս յերեսին:

55. ԻՆՉ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՌԻՆԻ ԿԱՐՄԻՐ-ԲԱՆԱԿԱՅԻՆԸ

1. Ինչքան ժամանակ ել գանվի կարմիր բանակում, իրեն հա-
 սանելիք շնչապատկան հողը մնում է կարմիր-բանակայինին: Այդ
 հողը նա կարող է կապարով տալ:

2. Սերմանման փոխառութիւնը կ.-բանակայինին արվում է
 առաջին հերթին և արտոնյալ պայմաններով:

3. Վարձակայանը մեքենաները տալիս է նույնպես առաջին
 հերթին, իսկ վառելիքն ու շինանյութերը եժան գնով են բաց
 թողնվում:

4. Անասնաբուժական ոգնութիւնը նույնպես առաջին հերթին
 է արվում, իսկ բեղմնակայանները կես գինն են վերցնում:

5. Գյուղատնտեսական հարկը պակաս չափով է գանձվում,
 հարկաչափը վորոշելիս կ.-բանակայինին նույնպես հաշվում են ըն-
 տանիքի անդամների թվում:

6. Կ.-բանակայինի յերեխաներն առաջին հերթին են ընդուն-
 վում դպրոցները և ազատվում են ուսման վճարից: Ծնողների
 մահից հետո վորբացած յերեխաներն առաջին հերթին են մանկա-
 տուն ընդունվում:

7. Արձակուրդի գնալիս կ.-բանակայինը ճանապարհածախս չի
 վճարում: Հիվանդութեան դեպքում ընտանիքի մի անդամ կարող է
 մեկնել նրա մոտ արտոնյալ տոմսով:

Գյուղափոկին

Վասիլյան-Լուսու գաւառի Յիբևան
 գյուղի Կարգաբաշխար Արևու Քարա-
 յանից

Պիտեմ

Ստեփանու կ. բանակայանի քարտի վրա
 իմ ինքնամիջի գույք ինչ 2 փոփր յիրիխա:
 Պանիք 1 կով, 1 հորթ, 2 այծ և մի ապշ:
 մի կու կիս կիկրար հող ունիք, բայց իմ
 ուժերով չիմ կարող յանիքս կուլալի:
 Ինչպիսիք իմ ոգնիլ կնչիլու և կապիլու:

Արևու Քարայան

1929 թ. ապրիլի 12

արտոնյալ—առանձին իրավունքներ ունեցող

ընդմուտայան—կենդանին բեղմնավորելու կայան

56. ՉԱՊԱՅԵՎ

1

Աղքատ գյուղացու վորդի Չապայը ցարական բանակում հասարակ զինվոր էր, այնինչ Կարմիր բանակում նա դարձավ զինվորի պետ:

Չապայն անվախ ու համարձակ առաջնորդ էր. հենց վոր նա յերևում էր շղթայում, բանակայինները վստահ առաջ էլին շարժվում:

— Չապայը պետք է հաղթի:

Չինվորները նրան շատ էլին սիրում: Չապայը նրանց պես հասարակ գյուղացի էր, նրանց հետ միասին էր ուտում, քնում, զրույց անում, նրանց հետ միասին էր կռվում:

Յե՛վ ինչպես էր կռվում նա, — հերոսի նման: Հերոսի մահով էլ մեռավ նա:

2

Աշնանային մռայլ օր էր, Ուրալ գետի ափերին: Սպիտակները մեզ շրջապատել էին չորս կողմից: Չապայը մի բուռը քաշերի հետ կռվում էր, պաշտպանվում:

Փամփուշտները վերջանում են, իսկ սպիտակները մոտենում են... Ընկնում են սպանված ու վիրավոր ընկերները, իսկ Չապայը դեռ գիմադրում է:

Մի ձեռքում՝ հրացան, մյուսում՝ ատրճանակ: Չորս կողմը գիտակներ են, վիրավորների հառաչներ: Չապայը մենակ կանգնած է դիք ափին ու կրակում է: Մի ձեռքը վիրավորվեց: Թևով սրբում է արյունն ու շարունակում է կրակել անփնաս ձեռքով:

Նա կրակեց վերջին փամփուշտը:

— Հիմա նա մեր ձեռքը կընկնի, — ուրախանում են գազազած թշնամիները:

Ի գո՛ւր... Չապայը վերջին անգամ կրակեց իր կրծքին ու քարքարոտ ափից ցած նետեց իրեն:

Արագ ու պզտոր ալիքները ծածկեցին նրա մարմինը:

57. ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ

Յելիք, ու՛մ կյանքը անիծել է, ո՛վ ձորտ է, մերկ է և ստրուկ. արդեն վստովում են մեր սրտերը, արդեն կովի լենք մենք ձգտում:

Սա յե մեր վերջին կռիվը և պայքարը մեր մեծ, Ինտերնացիոնալը աշխարհը կփրկե:

Այս հին աշխարհը կքանդենք մենք մինչև հիմքերը և հետո մեր նոր աշխարհը կշինենք մենք, ուր վոչ ստրուկ կա, վոչ դժգոհ:

Սա յե մեր վերջին կռիվը... (կրկնել):

Վոչ վոր չի տա մեզ ազատություն — վոչ խենթ հերոսը, վոչ արքան. մենք պետք է մեր ազատությունը խլենք մեր ձեռքով սեփական:

Սա յե մեր վերջին կռիվը... (կրկնել):

ճորտ—դուր ստրուկ—գերի պայքար—կռիվ

հերոս—ուժեղ մարդ, քաջ, իգիթ արքա—թագավոր

Փոփոխած գրիք հետևյալ բառերը

Չգտում ենք, կքանդենք մենք, խլելու լենք		
Այսպես՝	յես ձգտում եմ.	յես քանդելու յեմ.
	դու ձգտում ես.	յես քանդում եմ.
	նա ձգտում է.	դուք քանդելու յեք.
	յես եմ ձգտում.	դուք կքանդեք.
	դու յես ձգտում.	դուք քանդում եք.
	նա յե ձգտում.	

արտոնյալ—առանձին իրավունքներ ունեցող

բեղմնակայան—կենդանին բեղմնավորելու կայան

56. ՉԱՊԱՅԵՎ

1

Աղքատ գյուղացու վորդի Չապայեր ցարական բանակում հասարակ զինվոր եր, այնինչ Կարմիր բանակում նա դարձավ զինվորի պետ:

Չապայեն անվախ ու համարձակ առաջնորդ եր. հենց վոր նա յերևում եր շղթայում, բանակայինները վստահ առաջ ելին շարժվում:

— Չապայեր պետք ե հաղթի:

Չինվորները նրան շատ ելին սիրում: Չապայեր նրանց պես հասարակ գյուղացի յեր, նրանց հետ միասին եր ուտում, քնում, զրույց անում, նրանց հետ միասին եր կովում:

Յե՛վ ինչպես եր կովում նա, — հերոսի նման: Հերոսի մահով ել մեռավ նա:

2

Աշնանային մռայլ օր եր, Ուրալ գետի ափերին: Սպիտակները մեզ շրջապատել ելին շորս կողմից: Չապայեր մի բուռը քաջերի հետ կովում եր, պաշտպանվում:

Փամփուշտները վերջանում են, իսկ սպիտակները մոտենում են... Ընկնում են սպանված ու վիրավոր ընկերները, իսկ Չապայեր դեռ դիմադրում ե:

Մի ձեռքում՝ հրացան, մյուսում՝ ատրճանակ: Չորս կողմը դիակներ են, վիրավորների հառաչներ: Չապայեր մենակ կանգնած ե դիք ափին ու կրակում ե: Մի ձեռքը վիրավորվեց: Թևով սրբում ե արյունն ու շարունակում ե կրակել անփնաս ձեռքով:

Նա կրակեց վերջին փամփուշտը:

— Հիմա նա մեր ձեռքը կընկնի, — ուրախանում են գազազած թշնամիները:

Իզնուր... Չապայեր վերջին անգամ կրակեց իր կրճքին ու քարքարոտ ափից ցած նետեց իրեն:

Արագ ու պզտոր ալիքները ծածկեցին նրա մարմինը:

57. ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ

Յե՛լիք, ու՛մ կյանքը անիծել ե, ո՛վ ճորտ ե, մերկ ե և սարուկ. արդեն վսովում են մեր սրտերը, արդեն կովի չենք մենք ձգտում:

Սա չե մեր վերջին կռիվը

և պայքարը մեր մե՛ծ,

Ինտերնացիոնալը

աշխարհը կփրկե:

Այս հին աշխարհը կքանդենք մենք մինչև հիմքերը և հետո մեր նոր աշխարհը կշինենք մենք, ուր վո՛չ սարուկ կա, վո՛չ դժգոհ:

Սա չե մեր վերջին կռիվը... (կրկնել):

Վո՛չ վոք չի տա մեզ ազատություն — վո՛չ խենթ հերոսը, վո՛չ արքան. մենք պետք ե մեր ազատությունը խլենք մեր ձեռքով սեփական:

Սա չե մեր վերջին կռիվը... (կրկնել):

ճորտ—զուլ սարուկ—գերի պայքար—կռիվ

հերոս—ուժեղ մարդ, քաջ, իգիթ արքա—թագավոր

Փոփոխած գրիբ հեկեյլայ բառերը

Ձգտում ենք, կքանդենք մենք, խլելու չենք	յես ձգտում եմ.	յես քանդելու յեմ.
Այսպես՝	դու ձգտում ես.	յես քանդում եմ.
	նա ձգտում ե.	դուք քանդելու յեր.
	յես եմ ձգտում.	դուք կքանդեք.
	դու յես ձգտում.	դուք քանդում եք:
	նա չե ձգտում.	

58. ԿՈՄԻՆՏԵՐՆ ՈՒ ԿԻՄԸ

Կոմունիստական կուսակցութիւններ կան աշխարհիս բոլոր ծայրերում: Այդ կուսակցութիւնները մի միութիւն են կազմում, վոր կոչվում է Կոմունիստական Ինտերնացիոնալ կամ Կոմինտերն: Ասում են նաև III Ինտերնացիոնալ, վորպեսզի տարբերվի բուրժուական կուսակցութիւնների միութիւնից, II Ինտերնացիոնալից:

Կոմինտերնը հիմնվել է 1919 թ. Մոսկվայում և այժմ իր մեջ միացնում է 48 յերկրների կոմ. կուսակցութիւններ (սեկցիաներ):

Կոմինտերնը կոչվում է կապիտալիզմի դեմ և ձգտում է ազատել ամբողջ աշխատավոր մարդկութիւնը:

Կոմունիստական կուսակցութիւնն հարում են յերիտասարգների կոմունիստական կազմակերպութիւնները, կոմիերիտը կամ կոմսոմոլը, վոր նույնպես աշխատում է շատ յերկրներում: Սրանց միութիւնը կոչվում է ԿԻՄ (ուսներեն) կամ Յերիտկոմինտերն (Յերիտասարգ. Կոմունիստ. Ինտերնացիոնալ): Մեզ մոտ այդ միութիւնը կոչվում է Լենինյան Կոմունիստական Յերիտ. Միութիւն (ԼԿՅԵՄ):

Յերիտ. կոմ. կազմակերպութիւնը մեզ մոտ առաջ յեկաւ 1917 թ.:

ԿԻՄ-ը կոմունիստների ղեկավարութիւնը կռիւ է մղում կապիտալիստների դեմ, նա խոշոր աշխատանք է տանում նաև կուլտուրական-տնտեսական ասպարեզներում:

59. ՄՈՊՐ

Հոկտեմբերը հրահրեց բուրժուական յերկրների աշխատավորների ազատութիւնն ձգտումները: Ամեն տեղ աշխատավորութիւնն ուզում է Հոկտեմբերն իրագործել:

Կալվածատերերն ու կապիտալիստներն ուժեղացրել են ճնշումը ու հալածանքը. նրանք բանտարկում, աքսորում և գնդակահարում են հեղափոխական աշխատավորներին:

Մենք չենք կարող անտարբեր նայել վոր մեր յեղբայրներին տանջեն: Մենք պարտավոր ենք ոգնել հեղափոխական մարտիկներին: Մենք պարտավոր ենք աջակցել, վոր համաշխարհային Հոկտեմբերը շուտ գա և ազատե բոլոր ճնշվածներին:

ՄՈՊՐ-ը (հեղափոխական մարտիկներին ոգնող միջազգային կազմակերպութիւն) ոգնում է կապիտալիստի և կալվածատիրոջ

լծի դեմ կոլոզներին, հալածվածներին, բանտերում սանջվողներին և նրանց ընտանիքներին:

Մտեք ՄՈՊՐ-ի շարքերը:

ԲԱՌԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

հրահրեց—բորբոքեց	մարտիկ—կոլոլ, զինվոր
իրագործել—իրականացնել	աջակցել—ոգնել
անտարբեր—սառնասիրտ, անհոգ	

Հ Ա Ր Յ Ե Ր

1. Յե՛րբ է «Պարիզյան Կոմունայի որը»:
2. Ի՞նչ՞ն է ՄՈՊՐ-ի որը միացրել են «Պարիզյան Կոմունայի» որվան:
3. Ու՛նե՛ք ՄՈՊՐ-ի բլի՛ջ, ի՞նչ աշխատանքներ է տանում:

Գ Ր Ի Ա Ռ Ե Ք

այն ընկերների պատմածները, վորոնք ցարի և դաշնակների ժամանակ ընդհատակյա աշխատանքներ են տարել, բանտարկվել են, աքսորվել և այլն:

Դրեցե՛ք նրանց անունները, վորոնք մեռել են բանտերում կամ սպանվել են քաղաքացիական կռիւների ժամանակ:

ԲԱՏՐԱՎ ԿՆՔԻՐ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Պայմանագրի մեջ պե՛տ է գրել՝

1. Ի՞նչքան ժամանակով ես վարձվում:
2. Ի՞նչ աշխատանք ես կատարելու:
3. Յե՛րբ են հանգստի օրերը:
4. Հանգստի օրը աշխատելիս ի՞նչ վարձ ես ստանալու:
5. Ի՞նչ ուժիկ ես ստանալու. (փողով):
9. Տալ՞ն յեն քեզ բնակարան, ուտելիք:
7. Տալ՞ն յեն շորեր ու կոշիկներով, ի՞նչքան ժամանակով:
8. Ի՞նչ դեպքում կարող ես ժամկետից շուտ թողնել ծառայութիւնդ:
9. Պայմանդ խախտելու դեպքում քեզ վարձողն ի՞նչ տուգանք է տալու:

60. ԱՐԵՎՍՈՒՏԲԻ ՅԵՂԲԱՅՐՆԵՐԸ

Մեր ընկերներ, Արևմուտքի բանվորներ, գիտնք, վոր դուք ել գնում եք մեր ճամպով, ապրում եք մեր ալ, անման մայիսով և ուղեցույց ունեք Կարմիր Հոկտեմբեր:

Մեր դաշինքը մի անգամ ել հաստատեց, վոր անում ե ուժն ու փառքը գազգյահի, յերերվում ե կապիտալի հիմքը մեծ, ու հեռու չե փլումը հին աշխարհի:

61. ԹՇՆԱՄԻՆԵՐԸ

Կռիվը վերջացավ: Դաշտում ընկած եյին սպանվածների կույտեր, մարդկանց և ձիերի դիակներ: Այդ կույտերի միջից լսվում եյին վիրավորների հառաչանքները:

Մի չորացած առվի յեզերքին պռակած եյին յերկու զինվոր, յերկուսն ել ծանր վիրավոր:

Նրանց զգեստները տարբեր եյին: Միքանի ժամ առաջ դեռ կատաղի թշնամիներ եյին:

Այժմ լուռ նայում եյին իրար և ուզում եյին խոսել: Բայց իրար յեզու չեյին հասկանում: Հանկարծ ավելի յերիտասարդը սողեսող մոտեցավ «թշնամուն» և մեկնեց նրան իր ջրի սրվակը: Հետո յել աշխատում եր թաշկինակով կտրել նրա վերքից հոսող արյունը: Բայց վոչինչ դուրս չեկավ, միայն ինքն ավելի թուլացավ, պռակեց, քուն մտավ:

Վրա հասավ պարզկա գիշերը: Յուրտ քամին փչում եր հեռավոր լեռներից:

Կեսգիշերին տարիքավոր զինվորը կրկին մի փորձ արավ նստելու, բայց իզուր, արդեն բոլորովին արյունաքամ եր յեզել:

Աչքը գցեց իր հարևանի վրա: Յերիտասարդ զինվորը քնած եր և կուչ եր յեկել գիշերվա կտրող ցրտից:

— Պիտի սառչի, — անցավ հասակավորի մտքով. — անպատճառ պիտի սառչի խեղճը. ինչքան ել յերիտասարդ ե:

Յերբ արշալուսի դեմ վիրավորներին հավաքող խումբը մոտեցավ նրանց, յերիտասարդը զարթնեց, ուզեց բարձրանալ ու զարմացավ, վոր իր վրա մի վերարկու կար գցած:

Նայեց շուրջը, նայեց հարևանին: Հասակավոր զինվորը մեռած եր և պռակած եր առանց վերարկուի:

Նրա վերարկուն եր իր վրա:

ԲԱՌԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

զգեստ—հագուստ
սրվակ—ջիշ
մեկնել—տալ, առաջարկել

հառաչանք—տքոց, ախ քաշել
տարբեր—զանազան

62. Կ Ո Ւ Լ Ի

Ա-Չան չինացի բանվոր եր, Փրանսիացոց բամբակի դաշտում եր աշխատում: Հինգ տարի նա աշխատեց չնչին վարձով: Ծանր եր աշխատանքը, բայց ինչ արած. Փրանսիացիք ամեն մեկին դործ չեն տալիս, իսկ գործազուրկներ ինչքան ուզես կան...

Բամբակի դաշտում վերակացու յեր Շիմմերը, դաժան ու անպիտան մի մարդ: Չինացի բանվորների արյունն եր քամում, հայհոյում եր նրանց, ծեծում ու ջարդում:

Շիմմերը մի որ շատ զուգոռաց, հայհոյեց մի բանվորուհու, լացացրեց նրան: Ա-Չան խղճաց, մոտեցավ, ուզեց պաշտպանել կնոջը: Կատաղած Շիմմերը բռունցքի հարվածով գետին գլորեց խեղճ կուլիին:

Ընկերները շմեցին. ո՞վ ձայն կհաներ: «Չե վոր չինացին մարդ չե, մարդու հաշվի չե»: Ո՞վ կպաշտպանե կուլիին բուրժուական դատարանի առաջ:

Շիմմերին չդատեցին ել. բժիշկը վկայական տվեց, վոր Ա-Չանը արևահար ե յեզել:

ԲԱՌԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

կուլի—չինացի բանվոր, մշակ

արեվահար—արևից զարկած, հիվանդացած:

63. ՄԻՅԵՎՆՈՒՅՆ ԴԱՍԱԿԱՐԳԻՅ

Չորում վերջալույս ե: Արևը թեքվեց: Ներքևում մոխրագույն մութն ե: Ելեկտրական լապտերներն արդեն վառվում են գործարանի մոտերքում: Բանվորները նստել են շենքերի մոտ, ծխում են, խոսում:

— Յեվրոպացին զննց:

- Գնաց:
- Լավ մարդ եր ու լավ վարպետ:
- Ինչի՞ գնաց:
- Ո՞վ իմանա, ասում են՝ կինը մեռել է:

Մեկն ասում է.

— Յես կարծում եյի, թե Յեվրոպան հեքիաթի աշխարհ է, և այնտեղ ապրում են հեքիաթի մարդիկ: Բայց ահա, մենք Յեվրոպայում բարեկամ ունենք և ընկեր: Սաեւ ե՛ր բոլոր տեղերում ել այնպիսի մարդիկ կան, վորոնք կարող են մի ուրիշ աշխարհի մարդկանց հետ ընկեր լինել, աշխատանքի ընկեր և բարեկամ լինել, ազատ ժամերի բարեկամ:

— Հեղափոխական մարդ եր:

— Լավ վարպետ եր:

Դրսում նստածները կամաց կամաց մտան իրենց տները: Բանվորները հանգստանում են:

Քանի զարգացած լինի արդյունաբերությունը, այնքան ավելի տրակտորն ու գուլթանը մատչելի կլինեն գյուղացիության լայն խավերին:

64. ԱՌԱՆՑ ԹԱԳԱՎՈՐԻ

1

Պավելը ներս մտավ խրճիթ հարբածի պես: Դեմքին ժպիտ կար, աչքերը շողված էյին: Վերկան զարմացավ:

— Հը, ի՞նչ է, Պավել, խմել ես, ի՞նչ է. սև մոտ:

— Տանուտերը շրջանից ենպիսի լուրեր է բերել, վոր լսողը կգժվի. թագավորին վերցրին...

— Վերցրել են, բա ի՞նչպես, ուրիշ թագավոր կլինի...

— Չե, սրանից հետո առանց թագավորի կապրենք,

— Հանաք ես անում, ի՞նչ է, Պավել:

— Ի՞նչ հանաք, ի՞նչ բան: Ծրար է բերել: Այ հիմի համայնական ժողովում կկարդան: Թագավոր չկա: Մեկը հրաժարվեց. մյուսը մերժեց: Վերջը բոլորին ել խռիկ տվին:

— Հա, լսիր, Վերկա. գյուղացիք ըսկի չվախեցան, միայն զարմացել են: Եդ վճնց հաղթեցին թագավորին:

— Եդ չի բանը: Թագավորը հեչ: Դու են ասա նաչալնիկը, վոնց, ելի առաջվանն է մնալու:

- Չե, չե, բոլորը ծլկվել են, վորին ել նստեցրին:
- Սուտ է, այ դարմանք բան: Պավել, եդ վճնց յեղավ, ուր է գլխակապս, յերբ են կարդալու ժողովում:

2

Դպրոցում չտեսնված բազմութուն էր հավաքվել: Կանգնած էյին մուտքի մոտ, պատուհաններին, դպրոցի առաջ:

Ջահել վարժուհին հուզմունքից խեղդված ձայնով կարդում էր.

— «... ու մենք բարվոր համարեցինք հրաժարվել ուսական պետության գահից... »:

Չեր լսվում. կցկտուր խոսքեր էյին հասնում լսողներին:

— Չենք լսում, լավ կարգա, նորից...

— Թո՛ղ Պաշկա Սուսլովը կարգա, նա շատ վարժ կարդացող է:

Պավելը խիստ դեմքով սկսեց կարգալ մանիֆեստն ու լրագրերը: Յերկար տևեց, լուռ էլին բոլորը: Լուռ ել ցրվեցին, միայն մի ջահել զինվոր վազում էր մեկ խմբից մյուսին ու ասում.

— Նիժնի չին ել չկա, վերացավ: Ի՞նչ նիժնի, բա ո՞վ է վերինը, այժմ հավասարություն է:

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

տավսեմ—բոլորովին	կուսակցության և այլն)
նաչալնիկ—մեծավոր, շրջանի պետ	նիժնի չին—ցարի ժամանակ՝ շարքային զինվոր
մանիֆեստ—հրովարտակ, հայտարարություն, (կառավարության,	

Հ Ա Ր Ց Ե Ր

1. Ո՞ւմ մասին է ասված՝ «մեկը հրաժարվեց, մյուսը մերժեց»:
2. Վերկան ինչո՞ւ յե զարմանում, վոր թագավորին «վերցրել են»:
3. Իսկ ինչո՞ւ նաչալնիկն ավելի վտանգավոր է թվում նրան:
4. Ի՞նչ թուղթ են կարդում դպրոցում. սև խոսքերն են «... ու մենք բարվոր համարեցինք ... »:
5. Թագավորն իր կամքով հրաժարվեց գահից:
6. Թագավորի հրաժարականով լուծվեց ամեն ինչ:

65 ՄԱՅԻՍԻ ՄԵԿՆ ԱՐԵՎՄՈՒՏՔՈՒՄ

Ե՛յ, վտաքի յելեք, դուք, վոր դարերով աշխատել եք մութ շախտում ու հանքում. հասել է ահա մեր ազատ ուրը, պարզենք ալ դրոշ մեր կուռ շարքերում: Կյանքը մեզ համար կույր ու անոգուտ, տերերի համար փառք ու գանձ յեղավ:

դուրս գանք բողոքի շարքերով համուռ,
ու թող մեզ վրա գնդակներ տեղան:
Ե՛յ, վոաքի, վոաքի, ամբողջ աշխարհի
բանվոր, գյուղացի, հեղափոխական,
հիմքից կործանենք այս աշխարհը հին,
ու դիմենք առաջ, դեպի սպառազան:

ԲԱՌԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

շախտ—հանքահոր	կուռ—ամուր, խիտ
համուռ—միասին,	տեղալ—գալ, թափվել
սեղմ շարքերով	Արեվմուտը—լեվրոպական յերկրներ

Հ Ա Ր Յ Ե Ր

1. Ո՞ւմ տոնն է մայիսի 1-ը:
2. Ի՞նչպես են անվանում մայիսի 1-ի որը:
3. Ի՞նչպես է անցնում այդ որը բուրժուական յերկրներում:
4. Մեզ մոտ ի՞նչպես էր անցնում Հոկտեմբերից առաջ. իսկ այժմ:

ԿԱՐԴԱՅԵՔ ՈՒ ԳՐԵՅԵՔ

Մայիս-մեկյան լողուններ:
Այս փոսանավորի վճի տողերը կարելի ք լողուններ համարել.
Որինակ՝ «հասել է ահա մեր ազատ որը»:

66. ԱՏԵՓԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆ

Ստեփան Շահումյանը Բագվում յերկար ժամանակ աշխատե-
լով սիրելի դարձավ Բագվի բոլոր բանվորներին: Նրա դռները
միշտ բաց էին կուսակցական և ան-
կուսակցական բանվորների առաջ: Նա
սիրված էր իր ընկերներից: Նա մեծ
հեղինակություն էր վայելում Նրա մե-
ծության առաջ ղինաթափ էլին լինում
նույնիսկ հակառակորդները: Պատմում
են, վոր մենչևիկների մի խմբակ վո-
րոշել է սպանել Շահումյանին. խմբակի
անդամներից մեկը ծանոթանում է Ստե-
փան Շահումյանի հետ ու գնում նրա
հայերեն գասախոսության:



Դասախոսությունը լսելուց հետո
նույն այդ մարդը յերդվեց իր կյանքը
չխնայել Ստեփանի համար և մտավ կոմունիստական կուսակցու-
թյան մեջ:

1918 թվին Շահումյանը Կովկասի արտակարգ կոմիսարի պաշ-
տոնով ապրում էր 2 փոքրիկ սենյակներում: Յերբ նրան հարց-
ալին. «Ի՞նչպես ես ապրում քաղաքի ծայրում, ուր ամեն մի բո-
պե կարող են քլասել քեզ»,—նա հանգիստ պատասխանեց. «Այդ-
բանով յես չեմ հետաքրքրվում»:

Շահումյանը Կովկասի բանվորության ղեկավարն էր, և այս-
պես էլ հեղափոխությունը անվանեց նրան:

Բագվի կոմունայի անկումից հետո Ստ. Շահումյանը գնդա-
կահարվեց իր ընկերների հետ 1918 թ. սեպտ. 20-ին:

ԲԱՌԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

հեղինակություն—մեծություն,	ղեկավար—առաջնորդ
հարգանք	արտակարգ—հատուկ, կարևոր գոր- ծերով

67. ԿԵՂԱՓՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՏԱՐՎԵՑ

(Լեհիների նախից Պետրոգրադի խորհրդում 17 ք. հոկտ. 26-ին)

Ընկերներ, բանվորական ու գյուղացիական հեղափոխությունը
կատարվեց:

Այսուհետև մենք կունենանք խորհրդային իշխանություն, մեր
սեփական իշխանությունն առանց բուրժուազիայի մասնակցության:

Մեր հերթական խնդիրն է պատերազմի շուտափուլյթ լիկվի-
դացիան: Դրա համար էլ նախ պետք է մեր հաշիվը կապիտալի-
հետ վերջացնենք:

Գյուղացիության մեծ մասն ասում է՝ ըստական է խաղանք կա-
պիտալիստների հետ, մենք բանվորների հետ ենք: Յե՛վ գյուղացու
հավատը մենք ձեռք կբերենք մի գեկրեաով, վոր կոչնչացնի կա-
վածատերերի սեփականությունը:

Գործարաններում մենք կմտցնենք իսկական բանվորական
հսկողություն: Մենք սովորեցինք հաշտ աշխատել. այ, որինակ, այս
հեղափոխությունը:

Մասսաների կազմակերպված ուժը մեր կողմն է, այդ ուժը
կհաղթի բոլորին և պրոլետարիատին կտանի դեպի համաշխարհա-
լին հեղափոխություն:

Այսուհետև մեր գործն է՝ պրոլետարական սոցիալիստական
պետություն կազմակերպել:

Կեցցե՛ համաշխարհային սոցիալիստական հեղափոխությունը:

ձիվիղացիա—վերջացնել հաշիվ- | դեկրետ —կառավարութեան որոշ
ները փակել | (բոլորին հայտարարած)
համաշխարհային—ամբողջ աշխարհի |

68. ԲԱՆՎՈՐՆԵՐԸ ՊԵՏՏՊԱՆՈՒՄ ԵՆ ՀԵՂԱՓՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԱՅՐԱԲԱՂԱԲԸ

Մթնել եր: Մոխրագուլն հորիզոնի բոլոր կողմերից լսվում եր գործարանների սուլիչների վոռնոցը: Տասնյակ-հազարավոր բան-վորներ դուրս ելին յեկել խղճուկ բնակարաններից:

Կարմիր Պետրոգրադը վտանգի մեջ եր: Սպիտակները գալիս ելին: Տղամարդիկ, կանայք, յերեխաները շարժվում ելին—հրա-ցաններով, թիերով, բաներով զինված:

Մի կատաղի հեղեղի նման ամբոխը շարժվում եր զինվորների, թնդանոթների, ավտոմոբիլների, սուլերի հետ խառնված:

Գլխավոր փողոցով անցնում եր Կարմիր գվարդիան: Գլուխ-ները վեր պահած՝ բայում ելին ցեխի մեջ, չորս-չորս հոգի ամեն մի շարքում, առանց նվագի, առանց թմբուկի: Նրանց գլխին ծածան-վում եր մի կարմիր դրոշակ, վորի վրա կապիտ առերով գրված եր՝ «Հաշտութուն, հող»: Բոլորը յերիտասարդներ ելին: Նրանց դեմ-քի արտահայտութունն ասում եր, թե այդ մարդիկ զիտեն, վոր գնում են մեռնելու:

ԲԱՌԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

հորիզոն—չերկնքի նկատելի առ- | կարմիր գվարդիա—հեղափոխա-
բաժութուն՝ յերկրին միացող | կան բանակ Հոկտեմբերի որերին
ծածանվել—փոփոալ | արտահայտութուն — տրամա-
դրութուն՝ դեմքի կամ շարժում-
ների միջոցով

Հ Ա Ր Յ Ե Ր

- 1. Յերբ եր Պետրոգրադն այս դրութեան մեջ գտնվում:
- 2. Ինչո՞ւ չենք ասում «կարմիր Պետրոգրադ»:
- 3. Ի՞նչ ելին պահանջում ցուցարարները:
- 4. «Գնում ելին մեռնելու»...—Ինչո՞ւ համար:

Ես յեղավ տաստարի,
ապրում ենք առանց ցարի—
կենսուբախ, նոր կյանքով,
յերգ ու պարով, բերկրանքով:

Նվագեցեր նոր ուժով,
սիրտս յեռում ե աշխուժով,
ծափ տվեր, վոր պար գամ,
հերթը մերն ե ես անգամ:

Տերտերը թող ճաքի՛
բայլշխիկ եմ գիտակից,
թող կուլակը տրաքի՛
յես եմ գյուղթղթակից:

Կոմունիստ ե իմ երիկ,
իսկ տղաս՝ հոկտեմբերիկ.
հին կենցաղն ենք ատում,
նորի համար աշխատում:

ԲԱՌԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

կենսուբախ — ուրախ-զվարթ | երիկ—մարդ (ամուսին)
գյուղթղթակից — լրագրերին | ատել—չսիրել, զգվել
թղթակցող գյուղացի |

Գրեցե՛ք մի պարզ քրթակցություն «Մանկալին» կամ «Բա-
րակին»:

Որինակ՝

«Մաճկալի» խմբագրութեան

Այս տարի կարտոֆիլը մեզ մոտ մեծ բերք տվեց. պատճառն
այն ե, վոր շատերը կարտոֆիլը ցանելուց առաջ ծլեցրել ելին, շա-
տերն ել՝ տաք տեղ ելին պահել 5—10 օրով:

Այս փորձը մեզ մոտ հաջող անցավ, շնորհիվ խորհրդ. տնտե-
սութեան ջանքերի և սեփական որինակի: Գյուղացիք վերջնակա-
նապես ձեռք քաշեցին կարտոֆիլը մշակելու հին ձևերից:

(Իսկական անունն ու հասցեն) գյուղթղթակից՝ Ա.Ի.Կ.

1

Կեսորին, յերբ Ստեփանը յերգելով իր ձին եր թիմարում, Իվանյանը կանգ առավ ու ասաց.

— Քեֆիդ քեֆ չի համնի, վերջապես յեկան ձերոնք: Յես միշտ ել գիտելի, վոր դու նրանցից ես:

Ստեփանը պատասխանեց.

— Ընկեր կապիտան, յեթե չեմ սխալվում, ուռեբեն սրան ասում են—լուչչե պոզդնո, չեմ նիկազդա:

Կապիտանի դեմքին սև ամպ իջավ: Չիու մեջքին անմեղ տեղը խլիստի մի հարված իջեցրեց ու արագ-արագ դուրս յեկավ փողոց:

— Հաշիվը պարզ ե,—ասում եր Ստեփանը Ալեքին:—Սրանց մեջքը կոտրվեց: Պրագրամի ասածով ե դուրս գալիս, ախպեր: Սրանց որն անցավ: Հիմա իշխանութիւնը «սավետսկի վրաստ» ե, բանվորա-գյուղացիական:

Ալեքի համար մութն եր: Յեթե «սրանց որն անցել ե», ինչո՞ւ Իվանյանը մնում ե կապիտանի պաշտոնում, ինչո՞ւ Դրոն յերեկ ելի գորանոցում յերևաց իբրև մինիստր:

— Սպասիր, այ մարդ,—ասում եր Ստեփանը.—մեր ընկերները տուրմից դուրս են յեկել: Ես ե, կսկսեն միտինգները. ինչ վոր մութն ե, կհասկանաս:

2

Ալեքն աչքը անկել ե դեպի Բանաքեռի շոսեյի անակը. այնտեղից, մթի մեջ պիտի յերևա «նրանց» ավտոմոբիլի լույսը: Բաց դեռ չի յերևում:

Մտքերը պաշարեցին Ալեքին.

— Տեսնես ինչ ե մտածում քարի նման լուռ ու մունջ կապիտան Իվանյանը: Ի՞նչ սրտով նա միքանի բոպեյից հետո բայլչեիկների մեծին պատիվ տալու համար պիտի հանի այն թուրը, վորով ուզում եր ռեպրիզենտների գլուխը թուցնել:

Այդ լուռ ու մունջ ժամերին, գիշերվա ցրտում նույն այդ միտքն այրում եր Իվանյանի ուղեղը:

Ի՞նչ են մտածում հիմա զինվորներն իր մասին: Իվանյանին հայտնի յեր, վոր շատ-շատերը անհամբեր սպասում են բայլչեիկներին, կանցնեն նրանց կողմը... նա հիշեց, թե ինչպես ինքը թրով կոտորեց սպարաակցիների թուրքիկները՝ զինվորների աչքի առաջ: Հիշեց՝ ինչպես ինքն ու Չափիկյանը, քաղաքի պարետը, հայհույում

եյին ձերբակալած բայլչեիկներին... հիշեց ու սարսուաց. «այժմ զինվորները մտքներում ծաղրում են «ընկեր կապիտանին»:

Ավտոմոբիլի շչակի թավ ազդականչը սթափեցրեց Իվանյանին: Կուսարձակի ճառագայթները ցատկեցին ժայռերի յերեսով:

— Յեկան,—անցավ Իվանյանի գլխով մի սուր, ծակող միտք:

— Յեկան,—անցավ Ալեքի մտքով ու սիրտը լցվեց անսպասելի ուրախութամբ:

Իվանյանը պոկվեց տեղից ու սլացավ ավտոմոբիլին դիմավորելու:

Քիչ հետո ձիավորներով շրջապատած կարմրադրոշ մեքենան վանգ առավ Աբովյանի ծայրին:

ԲԱՌԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

լուչչե պոզդնո, չեմ նիկազդա— լավ ե ուշ, քան յերեք խլիստ—մտրակ (կնուտ) պրագրամ—ծրագիր	սավետսկի վրաստ—խորհրդային իշխանութիւն պարետ—քաղաքի կամ հիմնար- կի հակիչ (կամենդանտ) ազդականչ—պայմանական ձայն
--	--

71. ՋԱՆ ԱՆՎՅԱԶ

Ջան Ալազյազ, Ալազյա՛զ,
թիկնել սիրուն Ալազյազ.
ձեն տուր գու յել մեզ նման,
գովքեր ձոնիր, Ալազյազ:

Նոյեմբերին մեր յերկրում
իջավ գարուն, նոր գարուն.
կին-տղամարդ ձեռք ձեռքի
լույս ապագան ենք կոռ. մ:

Առվակներ կարկաչուն
ել պղտոր չեն, արնահամ,
սուղ ու շիվան, ավերում
անվերադարձ չքացան:

Հայաստանը յեռանդուն,
շահել-աշխուժ կոմսոմոլ,
ամենուրեք լսնդութիւն,
մարդիկ խաղաղ, բախտավոր:

Ջա՛ն Ալազյազ, Ալազյա՛զ,
յերեսեկ յես ել քեզ նման
ասրելի հար, հավիտյան
ու տեսնելի ապագան:

ԲԱՌԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

թիկնել—լայն թիկունքով, ուժեղ հար հավիտյան—միշտ, ընդմիշտ	կարկաչուն—գլխացող ամենուրեք—ամեն տեղ
--	---

ՊԱՏՄԵՅԵ՛Թ ՈՒ ԳՐԵՅԵ՛Թ

Ի՞նչ փոփոխութիւնն է առաջացել ձեր գլուղում Հայաստանի խորհրդացումից հետո.

1. Հողի ոգտագործումն ու մշակման յեղանակները.
2. Համայնացրած տնտեսութիւններ.
3. Չքավոր գյուղացիների գրութեան բարելավումը.
4. Զբանցքներ, առուներ, կամուրջ և այլն.
5. Անգրագիտութեան վերացում.
6. Կոոպերացիա, փող, վարկային ընկերութիւն.
7. Խրճիթ-ընթերցարան, սաղիո, դպրոց.

Հ Ա Ր Յ Ե Ր

1. Յերբ կատարվեց հեղափոխութիւնը Ռուսաստանում:
2. Իսկ Հայաստանում:
3. Ի՞նչպես են կոչվում այդ որերը:

ՏԵՂԵԿԱՆՔ

Փետրվար — փետրվարյան
 Հոկտեմբեր — հոկտեմբերյան
 Նոյեմբեր — նոյեմբերյան

Կազմեցե՛ք ու գրեցե՛ք այս ձեւով տարվա մյուս ամիսների մասին՝

Հունվար, Փետրվար, Մարտ, Ապրիլ, Մայիս, Հունիս, Հուլիս, Ռգոստոս, Սեպտեմբեր, Հոկտեմբեր, Նոյեմբեր, Դեկտեմբեր.

ՀԵՂԱՓՈՒԱԿԱՆ ՏՈՆԵՐԻ, ՀՈՒԵԼՅԱՆԱԿԱՆ ՅԵՎ ՍԳԻ ՈՐԵՐԻ ՈՐԱՑՈՒՅՑ

1. Հոկտեմբերյան հեղափոխութիւն. նոյեմբերի 7-ին (հ. 25)
2. Հայաստանի խորհրդայնացումը » 29-ին
3. Արյունոտ կիրակին (և Լենինի մահվան օրը) հունվ. 22-ին (9)
4. Կարմիր բանակի օրը փետրվարի 23-ին
5. Կանանց միջազգային օրը մարտի 8-ին
6. Փետրվարյան հեղափոխութիւն » 12-ին
7. Պարիզյան Կոմունա » 18-ին
8. Միջազգային պրոլետարիատի տոնը մայիսի 1-ին
9. Կոոպերացիայի տոնը հուլիսի 6-ին
10. Խոր. Սոց. Հանր. Միութեան օրը հուլիսի 7-ին
11. 26 կոմունարների օրը սեպտեմբերի 20-ին

« Ազգային գրադարան



NL0240189

8232